

## ԿՅԱՆՔԻ ՎԵՐՁԻՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՕՐԱԳԻՐԸ

Համաստեղի և Հակոբ Խաչմանյանի նամակագրությունից\*

**Բանալի բառեր** – Համաստեղ, Հակոբ Խաչմանյան, Արամ Հայկազ, Սփյուռքի հայության հոգսեր, ապագայի հավատ, Հայրենիքի Կարոտ, յուրատեսակ ուղերձ աշխարհասփյուռ հայությանը:

2016 թ. նոյեմբերի 26-ին լրացավ Սփյուռքի հայ գրականության նշանավոր դեմքերից մեկի՝ Համաստեղի (Համբարձում Կելենյան, 1895-1966) մահվան 50-րդ տարելիցը. նա հանկարծամահ եղավ Լոս Անջելես քաղաքում, իր ծննդյան 70 և գրական գործունեության 50-ամյա հոբելյաններին նվիրված ձեռնարկի ժամանակ՝ շնորհակալական խոսք ասելիս<sup>1</sup>:

Դրա հետ միասին փաստորեն լրացել է նաև գրողի գրական գործունեության 100-ամյակը, և, փախք Աստծո, նրա գրականությունն այսօր էլ ընթերցող ունի. Համաստեղի ու նրա գրական երկերի հրատարակության հոբելյաններին նվիրված միջոցառումներն անցնում են հետաքրքրության և խանդավառության մթնոլորտում: 2003-2007 թթ. Երևանում հրատարակվել են «Համաստեղ. Նամականի», «Համաստեղ. Մոռացված էջեր» (Ա-Դ հատորները), «Համաստեղ. մատենագիտական ցանկեր» գրքերը և նրա ստեղծագործությանը նվիրված մեր մենագրությունը: Այդ հատորները (ընդհանուր տպաքանակն անցնում է 3 000-ի սահմանը) բաժանել ենք մարդկանց, ովքեր սիրում և կարդում, իսկ հաճախ էլ իրենց հուզող հարցերի պատասխանները փնտրում են Համաստեղի երկերում: Սակայն, ցավոք սրտի, Համաստեղի ստեղծագործությունները տեղ չեն գտել հայ գրականության դայրոցական դասագրքերում:

Համաստեղը համեստ մարդ էր. Բոստոնում տպարանի նրա գործընկերներն այդպես էլ չիմացան, որ աշխատում են նշանավոր գրողի հետ: Նա խանգարում էր իր հոբելյանները նշելու փորձերը: Համաստեղի երազանքը հայությանը Հայրենիքում համախմբելն էր: Դեռևս 1926 թ. նա ծրագրել էր տեղափոխվել Երևան, բայց կուսակցական ընկերների, հատկապես Միմոն Վրացյանի նախագգուշացումից հետո ոչ մի քայլ չարեց ու ամբողջ կյանքն ապրեց Ամերիկայում, որն անվանում էր «երկաթներու եր-

\*Ընդունվել է տպագրության 20. 11.2016:

<sup>1</sup> Համաստեղը ծնվել է 1895 թ. հոկտեմբերի 15-ին, մահացել է 1966 թ. նոյեմբերի 26-ին (համացանցում տվյալները ճիշտ չեն):

կիր»։ Ամերիկյան միջավայրը նաև ստեղծագործական առումով խորթ մնաց նրան (եթե հաշվի չառնենք ամերիկյան իրականությունը ներկայացնելու գրական առաջին փորձերը, մեկ-երկու պատմվածք և «Հայաստանի լեռներու սրնգահարը» դրաման)։

Մինչդեռ «Գիւղը» (Բոստոն, 1924), «Անձրևը» (Փարիզ», 1929) պատմվածքների ժողովածուներում Համաստեղը վերակենդանացրեց ու հայության ապագա սերունդների համար անադարտ պահեց մեր Հայրենիքի պատկերը՝ աշխատանքի, հողից ծնված երկնային բարության ու փոխադարձ Սիրո թագավորությունը, որտեղ ապրում են հոգևոր օրենքները, որտեղ իշխում է Արարման ոգին, որտեղ թևածում է թոնրի հացի բույրը, իսկ տանիքներին շարված դուռնները դեղինով են ներկում երկնքի լազուրը։ Համաստեղի պատկերած գյուղաշխարհի վրայով անցել է ոճրագործ թուրքը, բայց հայության մագապուրծ հատվածը չի կորցրել Բօսորան վերադառնալու հույսն ու երազանքը։ Ավելին, գյուղաշխարհի այս ներկայացուցիչներն անգամ օտար երկրներում ապրում են հայրերից ժառանգած հոգևոր օրենքներով։ Համաստեղի հերոսներն այն հայ գյուղացիներն են, որոնք հայտնվել են խորթ և օտար երկրներում, փորձում են որոշ ժամանակ հարմարվել՝ համոզված, որ շուտով ամեն ինչ իր տեղը կվերադառնա։

Բայց իրականությունն ավելի քան դաժան էր։ Ու հայության այդ շերտը գերագույն գոհաբերության շնորհիվ ստեղծեց իր Հայրենիքի փոքրիկ պատկերն աշխարհի բոլոր ծագերում, և տասնամյակների ընթացքում գոյատևող Սփյուռքը շատ բանով է երախտապարտ լեզուներ չիմացող, կրթություն չստացած այն ՀԱՅ մարդկանց, որոնց անձնագոհության շնորհիվ ապրեցին ու ապրում են հայության սերունդները։ Համաստեղն ու նրա ժամանակակից տարագիր մյուս գրողներն անմահացրին հայության մի ողջ սերունդ, որի հոգևոր ժառանգության նշանակությունը պարզապես անհնար է գերագնահատել։

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի ստեղծումից հետո աշխուժացան հարաբերությունները հայ գաղթօջախների հետ։ Համաստեղը, նրա ընկերները՝ Հակոբ Խաչմանյանը<sup>2</sup> (1888–1986), Արամ Հայկազը (Չեքեմյան, 1900–1986) աշխույժ նամակագրություն ունեին կոմիտեի պատասխանատուների ու հայրենաբնակ գրչընկերների հետ։ Հակոբ Խաչմանյանը՝ 1964 թ. աշնանը, Արամ Հայկազը՝ 1969 թ. աշնանը եղան Խորհրդային Հայաստանում, տեսան հայ ժողովրդի ձեռքբերումները, հիացան տուֆակերտ Երևանով ու ամեն քայլափոխին հայերեն խոսք լսելու բացառիկ հնարավորությունով։ Այդ տարիներին Համաստեղը Գուրգեն Մահարուն գրում էր, թե ինչ երջանկություն կլինի իր համար շրջել Երևանի փողոցներում՝ Արարատի շուքի տակ, նայել հայ աղջիկների անսնան աչքերին ու կոնյակ խմել...։ Բայց ընտանեկան, ինչպես նաև կուսակցական-քաղաքական ինչ-ինչ արգելքներ խանգարեցին Երևան գալուն՝ չնայած Վազգեն Առաջին կաթողիկոսը Համաստեղին բաց հրավեր էր ուղարկել։ Գրողի ցավն այն էր,

<sup>2</sup> Հակոբ Խաչմանյանը մանկավարժ էր, հրապարակախոս, ՀՅԴ գործիչ, Համաստեղի դուստրերի կնքահայրը, երկար տարիներ վարում էր «Հայրենիք» օրաթերթի «Մեզմէ մէկը» բաժինը։ Համաստեղը, Արամ Հայկազը և Հակոբ Խաչմանյանը մտերիմներ էին և Բոստոն-Նյու Յորք ճանապարհը գրեթե ամեն օր կտրում էին նրանց նամակները, որոնք տասնամյակներ հետո յուրատեսակ **օրագրի** արժեք ունեն։

որ Հայրենիք էր գալու որպես սովորական զբոսաշրջիկ, քանի որ ընթերցողները, որպես կանոն, ծանոթ չէին նրա գրական ժառանգությանը: Նույնն էր նաև Արամ Հայկազի պարագան: Հետաքրքիր մի փաստ. Արամ Հայկազին խոստացան Երևանում հրատարակել նրա «Չորս տարի Քիւրտիստանի լեռներուն մէջ» պատմական հուշագրությունը, բայց ծրագիրը մնաց անկատար...

Դեռևս 1964 թ. վերջերին աշխուժացել էին Համաստեղի ծննդյան 70 և գրական գործունեության 50-ամյա հոբելյանը նշելու խոսակցությունները: Կարմիր գծով երկատված հայ ժողովրդի ստեղծագործ ոգու ու հայ գրողների մեծարման շատ միջոցառումներ էին եղել Հայաստանում և Սփյուռքում, բայց առաջին անգամ գրողի հոբելյանը պիտի դառնար համազգային երևույթ և համահայկական բնույթ ստանար. մի բան, որ կուսակցական-քաղաքական պառակտումներից տառապող հայության համար իսկապես բացառիկ երևույթ է: Այս գործում անգնահատելի է Հակոբ Խաչմանյանի՝ Համաստեղի հոբելյանական հանձնախմբի քարտուղարի և Արամ Հայկազի՝ նույն հանձնաժողովի նախագահի ավանդը: Երկու տարի անց Հ. Խաչմանյանը մանկավարժին հատուկ նրբանկատությամբ համախմբեց մարդկանց ու կազմակերպեց Համաստեղի մեծարումը «տիեզերական մասշտաբով» (Սիմոն Վրացյանի արտահայտությունն է): Ինչ-որ կանխագագում հուշում էր՝ չկորցնել մի օր անգամ: Ինչպիսի բժախնդրությամբ էր նա հավաքում նյութերը, հետևում հոբելյանական պատկերագրող գրքի հրատարակմանը, ուրախանում հատուկ նամակաթղթի ազդօրինակներով՝ մոռանալով նույնիսկ առողջական վիճակը, ընտանեկան ու անձնական գործերը: Հակառակ քաղաքական, նյութական, առողջական հանգամանքներին՝ համահայկական, համաժողովրդական մասշտաբներով կազմակերպվեց հոբելյանական հանդիսությունների շարքը, որը, դժբախտաբար, ընդհատվեց գրողի մահով...

Այդ տարիներին Համաստեղն ու Հակոբ Խաչմանյանն ամենօրյա կապի, հաղորդակցման մեջ էին, գրեթե ամեն օր, երբեմն՝ օրական մի քանի նամակ էին գրում իրար: Խաչմանյանի պահպանված նամակները վկայում են, որ նա ընկերոջը խրախուսելու, հոգսերը թոթափելու հնարավորություն տալու համար դիմում էր մտերիմներին՝ Համաստեղին ավելի հաճախակի գրելու խնդրանքով:

Սակայն 1966 թ. մարտի 4-ին տիկին Սրբուհի Համաստեղի մահը ցնցեց բոլորին... Դա գրողի կյանքի ամենադժվար շրջանն էր, և Խաչմանյանի հետ նամակագրությունը ջերմ ու անկեղծ երկխոսության արժեք ստացավ: Երկխոսություն, որ ձգվում էր Բոստոնից Նյու Յորք, բայց լեցուն էր հայրենի հողի, Հայրենիքի արևի կենարար բույրով, շնչում էր հայ ժողովրդի անկոտրում ոգու համառ լավատեսությամբ: 1966 թ. աշնանը Համաստեղի հոբելյանը կազմակերպեցին Հակոբ Խաչմանյանը և Արամ Հայկազը: Նրանք անտեսեցին Համաստեղի դժգոհությունները և Սփյուռքի բոլոր հայ գաղթօջախներում համախմբեցին հայության ջանքերը (Խորհրդային Հայաստանում չարձագանքեցին գրողի հոբելյանը նշելու կոչերին...): Համաստեղի մահից հետո այդ ձեռնարկները վերածվեցին սգահանդեսների...

Համաստեղն ու Հակոբ Խաչմանյանը երբեք չեն վարանել գրել ու ասել

այն, ինչ մտածում են. վկա՝ ներկայացվող նամակները: Համաստեղն առաջիններից մեկը խոսեց այն մասին, որ անմտություն է հայության Հայրենիքի մի մասը՝ Խորհրդային Հայաստանը, խորհրդային կարգերի հետ շփոթելը: Նա սթափ հայացքով էր գնահատում քաղաքական-կուսակցական շատ հարցեր, որոնք հաճախ էին դառնում անմիտ քննարկումների ու պատակտման պատճառ: Գրողին մեծ ցավ էր պատճառում այն փաստը, որ Հայ եկեղեցին էլ է երկատվել: Նա հստակ գիտակցում էր, որ Խորհրդային Հայաստանի ու բոլշևիզմի դեմ պայքարում շատ խնդիրներ այլևս պարզապես ժամանակավրեպ են ու խանգարում են հայ ժողովրդի միասնականությանը, և խոր ցավով գրում էր, որ Սփյուռքում անտեղյակ են այն հերոսական ջանքերին, որոնց շնորհիվ հայ ժողովուրդը փայփայում է ազգային իր արժեքները ու գոյատևում տոտալ բռնատիրության պայմաններում:

Համաստեղը հոգու ողջ ջերմությամբ կապված էր Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի աշխատակիցների հետ ու երախտագիտությամբ էր ընդունում Հայրենիքից ուղարկված գրքերը, հուշանվերները, ուրախանում գրչակից ընկերների ձեռքբերումներով: Համաստեղը նաև քննդատում էր իր այն կուսակցական ընկերներին, որոնք խորթացել էին հայ մշակույթին ու հայոց լեզվին:

Համաստեղի մահից հետո նրա արխիվի հետ նաև գրադարանի հայերեն գրքերի մի մասը Խորհրդային Հայաստան բերելու գործը կազմակերպեցին Արամ Հայկազն ու Հակոբ Խաչմանյանը (բարեբախտաբար հետագայում Հայաստան բերվեցին նաև նրանց արխիվային նյութերը): Գրականության և արվեստի Եղիշե Չարենցի անվան թանգարանում (այսուհետև՝ ԳԱԹ)՝ Համաստեղի ֆոնդի (այսուհետև՝ ՀՖ) 123-125 և Հակոբ Խաչմանյանի ֆոնդի (այսուհետև՝ ՀԽՖ) 416-421 համարներում, պահվում են Համաստեղի և Հակոբ Խաչմանյանի երկու հարյուրից ավելի նամակներ: Համաստեղի՝ մտերիմներից ու ընկերներից 18-ին ուղղված նամակները հրատարակել ենք «Համաստեղ. Նամականի» գրքում, բայց պակաս արժեքավոր չեն նաև պատասխան նամակները, որոնցից առանձին հատվածներ (երբեմն՝ ամբողջ նամակը) ներկայացրել ենք այդ գրքի ծանոթագրությունների բաժնում:

Ներկայացվող անտիպ նամակները հավաստի տեղեկություններ են տալիս Համաստեղի ապրած ողբերգության ու հայ գրողից անբաժան մտահոգությունների, ինչպես նաև նրա կյանքի վերջին տարիների վերաբերյալ: Նրա սիրտն այրվեց ու մոխրացավ օտար լեզուներով չթարգմանվող Կարոտից՝ Հայաստանի Կարոտից:

Նամակներում հանդիպում են արևելահայերեն քերականական ձևեր, կենցաղային մանրամասներ («անհարկի» բառից խուսափեցինք, բայց դրանցից շատերը տասնամյակներ անց իսկապես անհարկի են թվում) կամ մարդկանց անունների, ազգանունների՝ միայն իրենց հասկանալի համառոտագրության ձևեր: Նամակների ուղղագրությունը պահպանել ենք, կետադրական որոշ փոփոխություններ ենք կատարել: Ընդգծումները հեղինակներին են:

Մարգարիտա Մ. Խաչատրյան  
*Բանաս. գիտ. դոկտոր*

Summary

**THE DIARY OF THE LAST YEARS OF LIFE**

From the correspondence of Hamastegh and Hakob Khashmanyan

Margarita M. Khachatryan

**Key words** – Hamastegh, Hakob Khashmanyan, Aram Haykaz, concerns of Diaspora Armenians, faith in the future, nostalgia for the homeland, special message to the Armenians around the world.

Hamastegh is one of the prominent figures of Armenian literature in the Diaspora. His rich literary heritage after a whole century makes the reader happy with new ideas. Fortunately, the archive and most part of the books in Armenian of the writer's library are kept in the Yeghishe Charents Museum of Literature and Art., Thanks to that it is possible to reach a better understanding of the writer's inner world through his letters, and to see the origin of his nostalgia that is hard to translate into other languages. Aram Haykaz and Hakob Khashmanyan were friends of Hamastegh. Hamastegh and Hakob Khashmanyan were members of ARF Dashnaktsutyun, and Aram Haykaz was an active supporter, but they skilfully avoided party political barriers, and noted with satisfaction the positive changes that took place in the Soviet Union. However, Hamastegh could not fulfill his dream and he never saw his country in the shadow of Mount Ararat, which is part of the homeland of Armenians, but he was always writing and speaking with pride about the efforts of the Armenian people to preserve and enrich their identity and culture.

In the autumn of 1966, the 70th anniversary of Hamastegh and the 70th anniversary of his literary activities were celebrated. Hamastegh participated in three jubilee events. At this time, the writer was concerned about the guests who came from Soviet Armenia to visit him. The letters will help the reader to understand the problems and disappointments of Armenians living in the United States, as well as their faith in the future of the Armenians.

Резюме

**ДНЕВНИК ПОСЛЕДНИХ ЛЕТ ЖИЗНИ**

Из переписки Амастеха и Акопа Хашманяна

Маргарита М. Хачатрян

**Ключевые слова** – Амастех, Акоп Хашманян Арам Айказ, заботы армян диаспоры, вера в будущее, ностальгия по родине, особое сообщение армянам по всему миру.

Амастех является одним из видных деятелей армянской литературы в Диаспоре. Его богатое литературное наследие спустя целый век радует читателя новыми представлениями. К счастью богатый архив и большая

ԱՐԽԻՎ

Թ (ԺԵ) րարի, թիվ 2 (58), ամիսի-հունիս, 2017

ՀՀ-ի հանրապետության հանրախոս

часть книг на армянском библиотеки писателя хранятся в Музее литературы и искусства имени Егише Чаренца, благодаря чему возможно посредством писем достигнуть лучшего понимания внутреннего мира писателя, происхождение ностальгии, которую невозможно перевести на другие языки. Арам Айказ и Акоп Хашманян были друзьями Амастеха. Амастех и Акоп Хашманян были членами АРФ Дашнакцутюн, а Арам Айказ активным сторонником, но они умело избегали партийных политических барьеров, и с удовлетворением отмечали позитивные изменения происходившие в Советском Союзе. Правда, Амастеху не удалось осуществить свою мечту и он так и не увидел свою страну в тени горы Арарат, которая является частью Родины армян, но всегда с гордостью писал и говорил об усилиях армянского народа сохранить и обогатить свою самобытность и культуру.

Осенью 1966 года было отпраздновано 70-летие Амастеха и 70-летие его литературной деятельности. Амастех участвовал в трех юбилейных мероприятиях. В данный период писателя озаботили гости, которые пришли из Советской Армении чтобы навестить его. Письма помогут читателю понять проблемы и разочарования армян проживающих в США, а также их веру в будущее армян.

\*

\* \* \*

## 1.

Յունիս 19, 1957<sup>3</sup>

Միրելի՛ Խաչման,

Միշտ ալ մտքիս մէջ կար գրել: Այն օրերուն կարդացի «Բաց նամակդ կաթողիկոսին»<sup>4</sup>: Ինձ համար քիչ մը անելի պարզ եղաւ, որ մենք վաղուց կորսնցուցած ենք լեզու մեր հակառակորդ տարրին<sup>5</sup> հետ խօսելու: Ես շատ չեմ հաւնիր մեր փրօպականտայի<sup>6</sup> ձևին, և չափով մը իզուր կը տարուին այդ ուղղութեամբ եղած աշխատանքները, և անելի շատ յաջողած ենք մեր դէմ ատելութիւն գրգռել, սպտակել՝ աջ ու ձախ սուր ձօճելով և կամ առնուազն հայիոյել: Եթէ կ'ուզենք նպատակ մը տարածել, այդ իր լեզուն ունի: Մեր փրօպականտայի այս խիստ ձևը մեր դէմ միմիայն ատելութիւն կրնայ գրգռել, ինչքան ալ խելացի խօսքեր ըսուին: Միջոցի մէջ կան կիրք, ատելութիւն, բռունցքներու սպառնալիք և աղմուկ: Ինչ ալ ըլլայ, ատելութեան մէջ ո՛չ տրամաբանութիւն մը կը մնայ, ո՛չ գեղեցիկ զգացում և ո՛չ ալ հոգի: Արուեստը ըսելու ձևին մէջ է: Նոյն բաները կարելի է երկու ձևով ըսել: Ըսել ձևով մը, որ կը քանդէ, և ըսել ձևով մը, որ կը շինէ: Քու ըսելու պատշաճ ձևն էր, որ նամակդ հասաւ իր հասցէին: Գիտէի, որ մեր ուզած պատասխանը չպիտի տային, որովհետև անոնց մէջ նաև լեզուն է նախապաշարու մը և բռնի ատելու-

3 Տպագրվում է ըստ բնագրի, ԳԱԹ, ՀԽՖ, N 417:

4 «Հայրենիք» օրաթերթի 1957 թ. փետրվարի 7-9-ի համարներում լույս է տեսել Հակոբ Խաչմանյանի «Մրտի խօսքեր Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Վազգէն Առաջինին» հոդվածը, որտեղ նա Վեհափառին կոչ է արել «... վեր մնալ ու ազատ՝ մեզ խեղդող բաժանումներէն»:

5 Նկատի ունի բոլշևիկներին ու խորհրդային կարգերը, ընդհանրապես՝ ոչ դաշնակցականներին: 6 Քարոզչություն:

թիւնը, և այդ դարձած է տեսակ մը համաձարակ: Մանաւանդ մեզ նման տկար ազգի մը մէջ պօլշնիկները շատ բան աղձատեցին: Մէկ համայնական գետին մը ունէինք՝ Եկեղեցին, ան ալ բաժնուեցաւ<sup>7</sup>, կարծես Սփիւռքին օտարացումը չէր բաւեր: Այս կրքային պայքարներուն մէջ օր մըն ալ պիտի փնտռենք նպատակը ու չի պիտի գտնենք:

Ունինք տակաւին ծալվարականներ<sup>8</sup>, որ գուցէ չի բաժնեն քու բաց նամակիդ ըսելու ձևը: Անոնք շատ անգամ բաց դուռը կը գոցեն, յետոյ դուռը կտորելով ներս կը մտնեն՝ ցոյց տալու համար, որ «յեղափոխականին այդպէս է վայել»:

Զէ, մեր փրօպականտայի ձևը շատ չեմ հանիր, այդ պատճառով ալ մենք մեզ շատ ենք կղզիացուցեր: Էհ, կը յուսամ այս Պատգամաւորական ժողովին<sup>9</sup> կու գաս, ու կը տեսնուինք:

Շատ բարևներս Արուսեակին և սիրելի Արփիկին<sup>10</sup>: Լորիկը<sup>11</sup> օգոստոս ճին պիտի հասնի Նիւ Եորք: Այսօր Երուսաղէմէն առինք նամակ մը:

Սրբուհին<sup>12</sup> ՀՕՄ-ի Պատգամաւորական ժողովով զբաղուած է:

Սիրով՝ Համաստեղ

## 2.

Սեպտեմբեր 15, 1958<sup>13</sup>

Սիրելի Խաշման,

Այս մի քանի օրերը իսկապէս տագնապի մէջ եմ, և ամբողջ մարմինս, ջիղերս անհանգիստ վիճակի մէջ եմ: Այսօր արդէն ուզեցի դուրս գալ այդ բոլորէն: Բան չկայ, երբ պատմեմ, պիտի տեսնես, որ եղածը շատ լաւ բան մըն է, և սակայն ես

7 Նկատի ունի 1955-1956 թթ. Կիլիկիո Աթոռի մէջ ու նրա շուրջն առաջացած լուրջ ձգնաժամը:

8 Ակնարկը Երվանդ Օսյանի (1869-1926) «Ընկեր Բ. Փանջունի (Առաքելություն մը ի ծալվար)» վեպի (1911 թ.) հերոսի մասին է, որի անունը դարձել է շահամուրթոյան ու շատախոսոյան խորհրդանիշ:

9 Խոսքը Հայ օգնության միության՝ ՀՕՄ-ի ժողովի մասին է: Առավելապէս հայուհիներից կազմված այս միությունը հիմնվել է 1910 թ., գործում է ՀՅԴ հովանու ներքո:

10 Հակոբ Խաշմանյանի կինն ու դուստրն են:

11 Համաստեղի ավագ դուստրը՝ Լորիկը (Լորեստո-Անահիտ, ծնվ. 1939 թ. հունվարի 20), մեկ ուսումնական տարի՝ 1956 թ. հոկտեմբերից մինչև 1957 թ. օգոստոս, սովորել է Բեյրութի Նշան Փալանձյան ձեմարանում: «Համագգային» հայ կրթական և մշակութային ընկերակցության Հայ ձեմարանը բացվել է 1930 թ. մարտի 3-ին: 1947 թ. Փալանձյան քոյրերը 20 000 անգլիական ոսկի նվիրեցին Հայ ձեմարանին՝ ի հիշատակ իրենց եղբոր՝ Նշան Փալանձյանի, որի անունով կոչվեց կրթօջախը:

«Համաստեղ. Նամակների» գրքում (Եր., 2003 թ., այսուհետև՝ «Նամակների») հրատարակել ենք Համաստեղի 1951-1969 թթ. նամակները Նշան Փալանձյան ձեմարանի տնօրէն Սիմոն Վրացյանին (Գրուզիայնա, 1888-1969): 1957 թ. հունվարի 12-ին Համաստեղը գրում է Սիմոն Վրացյանին. «Լորիկին հայերէնը, անոր գործածած նոր բառերը գիտ շատ կը յուզեն», «Իր հայերէն նամակներուն մէջ նկատե՛ր եմ, որ հետզհետէ կը պակսին տառախալները, և նախադասութիւնները ճիշդ կը կազմէ նոր բառերով»: Նույն թվականի փետրվարին (նամակը թվագրված չէ) Ս. Վրացյանին նա պատմում է. «Լորիկէ յաճախ կը ստանանք նամակներ, և ինչքան ուրախ կ'ըլլանք, երբ ամէն նամակէն կը տեսնենք, որ հայերէնը հետզհետէ մեր հայրենի աղբիւրներուն պէս գեղեցիկ կը հնչէ մեզի: Հիմա արեւի կը հաւատամ, թէ ինչ ըսել է միջավայր և ձեմարան»:

1957 թ. օգոստոսին Համաստեղը գրել է Ս. Վրացյանին. «...Երէկ դիմաւորեցինք Լորիկը շատ մեծ կարօտով: Որպէս հայր՝ երանելի տրամադրութեան մէջ եմ, երբ կը լսեմ Լորիկի աղուտը հայերէնը: Իսկապէս կատարուած է հրաշքը: Լորիկը դարձեր է իսկական հայ աղջիկ մը իր ձայնի երանգով և խօսելու շեշտով, մանաւանդ՝ իր հայերէնով»: Պատասխան նամակում (1957 թ. օգոստոսի 26) Ս. Վրացյանը գրել է. «Հրաշք չէ, սիրելի Համաստեղ, կատարուածը. Լորիկը օրինակ մըն է, թէ ինչ կրնար ընել տարիներու ընթացքին Հայ օգնութեան միութիւնը, եթէ անկեղծօրէն, առանց պոլիտիկա խաղալու աշխատէր ամէն տարի քանի մը Լորիկներ ուղարկել ձեմարան՝ ամերիկածին նոր սերունդէն հայ մտաւորականներ պատրաստելու նպատակով»:

12 Համաստեղի կինը՝ տիկին Սրբուհի Համաստեղը (Պեկյան, 1903-1966): Նա ՀՕՄ-ի եռանդուն անդամներից էր:

13 Տպագրվում է ըստ բնագրի, ԳԱԹ, ՀԽՖ, N 417:

պէտք եղածին չափով վճռական չեղայ, և պէտք է ըսել, որ կարճ ժամանակին մէջ չի կրցի կարգադրել իմ անձնական գործերը՝ իմ տեղը ուրիշ մէկը փոխարինել ժամանակաւոր կարգով, ճամբայ երթալ սեպտեմբեր 26ին՝ Հայաստան երթալու համար:

Բոլորովին անակնկալ: Օր մըն ալ՝ մէկ շաբաթ առաջ, ստացայ հեռագիր մը Էջմիածնի կաթողիկոս Վազգէն Առաջինէն<sup>14</sup>, որ զիս կը հրաւիրէ սիրով ըլլալ հոկտեմբերի սկզբի հանդիսութեան որպէս հիւրը Մայր Աթոռին<sup>15</sup>: Այլ խօսքով, ինձ հեռախօսեցաւ Նիւ Եորքէն ալ Թեմական խորհուրդի ատենապետ պարոն Ալաձեան, որ իմ բոլոր ծախսերը կը հոգան, եթէ ուզեմ ճամբայ իյնալ՝ ներկայ ըլլալու կաթողիկոսի ծննդեան յիսնամեակի հանդիսութեան: Ինձ համար առիթ էր Հայաստան երթալու: Ընկերներու թեր ու դէմ կարծիքները կրնան խճողել քիչ մը իմ այդ ջերմ փափաքը: Գիտեմ, որ պիտի մեծ գոջում ունենամ, եթէ չերթամ այս միակ առիթով: Հասայ այն վիճակին, որ մի քանի գիշերներ նոյնիսկ չի կրցի քնանալ: Եւ արդէն հեռախօսեցի առաջնորդարան (որոնք իմ հեռախօսին կը սպասէին վիզէ<sup>16</sup> բերել տալու համար), որ չպիտի կրնամ ձիշդ ժամանակին ներկայ ըլլալ այդ հանդիսութեան, որովհետև չի կրցի կարգադրել գործերս այսքան կարճ ժամանակին մէջ: Գրեցի նաև Թեմական խորհուրդի ատենապետին՝ նոյն բացատրութեամբ: Այսօր գրեցի նաև կաթողիկոսին՝ շնորհակալութիւն հայտնելով իր հրաւեր-հեռագրին, գրելով նաև, որ ուրիշ առիթով նոյնքան պիտի սիրէի գալ Հայաստան: Ա՛լ ջիղ չի մնաց վրաս: Այս պատասխաններէն յետոյ քիչ մը աւելի հանգիստ կը զգամ, ըսել կ'ուզեմ՝ պիտի կրնամ քնանալ: Եղածը իսկապէս զիս խռովքի մէջ ձգեց: Շատ պիտի ուզէի երթալ, եթէ անմիջական կարենայի կարգադրել գործերս:

Կը յուսամ լաւ ես, լաւ են նաև տնեցիները:

Սիրով՝ Համաստեղ

### 3.

Նոյեմբեր 28, 1959<sup>17</sup>

Սիրելի Խաչման,

Նամակդ ստացայ: Ընդհանրապէս չի կրցի հասցնել, քանի որ այս ուրբաթ առտու Քալիֆոռնիա պիտի մեկնիս: Շատ լաւ բան կ'ընես, վստահ եմ, որ պիտի սիրես Քալիֆոռնիան: Ես ինչքան պիտի ուզէի այդ տեսակ տեղ մը ապրիլ:

Ձեր յօդուածին և կամ հեղինակի նամակին մասին քիչ մը ծանօթ էի և սակայն չգիտէի, որ կրնան վերադարձնել: Չգիտեմ՝ Դարբինեանը<sup>18</sup> լուր ունէ՞ր այդ յօդուածին:

14 Ամենայն Հայոց կաթողիկոս (1955-1994) Վազգէն Առաջինի (Լևոն-Կարապետ Պալճյան, 1908-1994) ծննդյան 50-ամակը և գահակալության երրորդ տարեկիցը նշվել է 1958 թ. հոկտեմբերի 11-24-ին («Էջմիածին», 1958 թ., Ժ-ԺԱ համար): Լորիկը մեզ ուղղված նամակներից մեկում գրել է, որ իր տատը՝ տիկին Սրբուհու մայրը՝ Հռիփսիմե Սարգսյանը (1889-1978), բազմիցս եկել է Հայաստան: «Վեհափառը մօրս հորեղբոր աշակերտը (վստահ չեմ) եղած էր կամ պարզապէս ծանօթ Ռումանիայէն: Լսեք եմ», - գրում է նա: «Համաստեղ. 1895-1966» յուշամատյանի (Նյու Յորք, 1966, այսուհետև՝ «Յուշամատեան») 52-րդ էջում տպագրված է Վազգէն Առաջինի ողջույնի խոսքը գրողին: ԳԱԹ-ում՝ ՀԽՖ 536 համարում, պահվում են Վազգէն Առաջինի նամակները Հակոբ Խաչմանյանին: Պահպանվել է նաև Հ. Խաչմանյանի հարցազրույցը Վազգէն Առաջինի հետ:

15 Այդ հրավերը բաց էր և մի քանի անգամ կրկնվել է Էջմիածնի Ս. Աթոռի դիվանատան կողմից: Վազգէն Առաջին կաթողիկոսի հետ Համաստեղը հանդիպել է ավելի ուշ՝ 1960 թ., երբ Վեհափառը ԱՄՆ իր առաջին հովվապետական այցով մայիսի 20-ից հուլիսի 28-ը Հյուսիսային Ամերիկայում էր:

16 Թույլտվություն, վիզա (անգլ.):

17 Տպագրվում է ըստ բնագրի, ԳԱԹ, ՀԽՖ, N 417:

18 «Հայրենիք» անսագրի և նույնանուն օրաթերթի երկարամյա խմբագիր, Համաստեղի մտերիմ-



ծին մասին: Գուրգէնը<sup>19</sup> տակաւին չի վերադարձաւ, իսկ Ժիրայրին<sup>20</sup> երեսն ալ շատ քիչ անգամ կը տեսնէմ: **Իմ մտահոգութիւնը այն է, որ պոլշեիկներու դէմ ունեցած մեր պայքարը՝ շատ արդար, եկած և գոցած է դուռ ու պատուհան, և բոլորովին կտրուեցանք թէ՛ Հայաստանէն և թէ՛ մանաւանդ հայ ժողովուրդէն:** Խորթացուցիցիք մենք մեզ, մեր շարքերը և մանաւանդ՝ նոր սերունդը, որ միշտ ալ խորթ պիտի մնայ: Տանիք մեր պայքարը օտար բռնատիրութեան դէմ և սակայն գուրգուրանք մեր ժողովուրդին վրայ, որ գրկանքներու գնով կ'աշխատի մշակոյթով իր անկախութիւնը պահել: Մեր մէջ ամէն բան շատ ենք քաղաքականուցեր: Որևէ լաւ բան Հայաստանի մէջ կը սիրենք կասկածի ենթարկել՝ մեր վէճը պահելու համար: Ինչպէս 25 տարի առաջ էր, նոյնն է հիմա: Մեզի համար ոչինչ փոխուած է Հայաստանի և հայ ժողովուրդին համար:

Ըսած չէիր, թէ ո՞վ է այդ նամակագիրը: Ո՞վ ալ ըլլայ, անկեղծ և սրտացաւ կերպով գրուած էր: Ո՞ր հեղինակն է, որ չպիտի ուզէր իր գործերը հրատարակուած տեսնել Հայաստանի մէջ և հայ ժողովուրդին համար: Չէ՞ որ մեր ժողովուրդին համար է գրականութիւնը: Տեղ մը ես ինքս ալ նման բաղձանք մը յայտնած էի մամուլին մէջ, որ պիտի ուզէի տեսնել իմ գործերը հրատարակուած Հայաստանի մէջ, պիտի ուզէի տեսնել արտասահմանի բոլոր հեղինակներու գործերը Հայաստանի մէջ: Երբեք չի մտածեցի, որ հակակուսակցական ընթացքի մը մէջ կրնայի ըլլալ: Չհասկցայ, թէ ի՞նչ տրամաբանութեամբ «վնասակար» բան մը գտած են այդ նամակին մէջ:

Ես քու տեղն ըլլամ, փորձի կամ միայն հետաքրքրութեան համար այդ յօդուածը կը դրկեմ Կ. կօմիտէին<sup>21</sup>՝ միմիայն հասկնալու համար, որ արդե՞ծք հակակուսակցական բան մը կայ, որ մենք չենք հասկնար, մանաւանդ որ գրողը դաշնակցական չէ և մտահոգութիւն մը կ'արտայայտէ:

Ահա թէ ինչ տեսակ մտայնութիւն կը տիրէ մեր մէջ: Իմ Հայաստան չերթալս չափով մըն ալ կապ ունէր այդ մտայնութեան հետ, և ինքզինքս ակամայ բարդութեան մէջ պիտի ձգէի՝ խռովելով նաև իմ խաղաղութիւնը:

Բարևներ մերիններէն՝ Սրբուհիէն, Լորիկէն և Արմինէէն:

Եթէ կրնամ դրամ ճարել, կը մտածենք Արմինէն մէկ տարուայ համար ձեւմարան դրկել<sup>22</sup>, մանաւանդ որ ինքն ալ կը փափաքի:

Սիրով՝ Համաստեղ

ներից Ռուբեն Դարբինյան (Արտաշես Չիլինգարյան, 1883-1968): Համաստեղի 5 նամակները Ռ. Դարբինյանին հրատարակել ենք «Նամականի» գրքում: Ռ. Դարբինյանը Համաստեղի ծննդյան 70 և 50-ամյակի կենտրոնական հանձնախմբի պատվակալ նախագահն էր:

19 «Հայրենիք» օրաթերթի խմբագիր, ՀՅԴ նշանավոր գործիչ Գուրգէն Մխիթարյան (1890-1962):

20 «Հայրենիք» օրաթերթի աշխատակից, ՀՕՄ-ի «Հայ սիրտ» ամսագրի խմբագիր, Փարիզի «Յառաջ» օրաթերթի հիմնադիր-խմբագիր Շավարշ Միսաքյանի (1884-1957) կրտսեր եղբայրն է՝ Ժիրայր Միսաքյան (1899-1968): Սովորաբար ստորագրել է «Երոսպացի» ծածկանունով:

21 Խոսքը ՀՅԴ ԱՄՆ կենտրոնական կոմիտեի մասին է:

22 Համաստեղի երկրորդ դուստրը՝ Արմինէն (ծնվ. 1943 թ. նոյեմբերի 28-ին), մեկ ուսումնական տարի սովորել է Բեյրութի Նշան Փալանձյան ձեւմարանում:

Յուլիս 4, 1960<sup>23</sup>

Սիրելի Խաչման,

Ստացայ նամակդ: Այստեղ, կարճ ժամանակով, առանձինս<sup>24</sup> տեսնուեցայ կաթողիկոսին<sup>25</sup> հետ, յարմար ժամանակ չէր աւելի երկար տեսնուելու, երբ դուրսը ժողովուրդը իրեն կը սպասէր և արդէն շատ էր սպասած իր ուշացումին պատճառով<sup>26</sup>: Իմ տեսակցութեան պարագան ուրիշ առիթով մը կը պատմեմ քեզ և սակայն մէկ բան, որ մէջտեղի քաղաքական պայքարները իրենց աւերիչ դերը կատարած են մեր կրօնական հաստատութիւններուն և եկեղեցականներուն մէջ: Այստեղ եկեղեցականը, ըսենք որպէս դասակարգ, չգիտակցեցաւ իր իրաւունքները պաշտպանել: Անոնք շատ շուտ կերպով կրնան իրար հասկնալ, եթէ վերցուի արտաքին քաղաքական շպարը: Իմ տպաւորութիւնը այն եղաւ, որ Վազգէն կաթողիկոսը շատ լաւ կ'ըմբռնէ դաշնակցութեան քաղաքական տեսակէտը և սակայն չի ըմբռնէր պայքարը Էջմիածնի դէմ: Եւ մենք արտաքինով, սովորութիւն դարձած միայն մէկ գծով տարած ենք մեր պայքարը՝ ըսելու համար, որ Առաքելեանը<sup>27</sup> Չեկայի<sup>28</sup> ներկայացուցիչն է կաթողիկոսին հետ: Չենք փորձեր մօտենալ, որպէս հայ՝ արտէ սիրտ գիծ մը ձգել և իրար հասկնալ՝ որպէս հայ: Կաթողիկոսը մէկն է, որ կ'ուզէ մօտենալ, խօսիլ և, ինչու չէ, վերցնել արտաքին, քլիշէ<sup>29</sup> դարձած նախապաշարումները: Իմ տպաւորութիւնը այն է, որ ան հայ եկեղեցական է ազնուական իմաստով և մտահոգուած է միմիայն Էջմիածնով, որ իր օրով չենթարկուի վտանգներու: Եւ ես վստահ կերպով կրնամ քեզ ըսել, որ ան կը տեսնէ այդ վտանգը, երբ Հայաստանի հայ ժողովուրդը ինքզինք դարձուցած է խորթ և կամ, վերջին պօլշեիկեան դաստիարակութեան շնորհիւ, հեռացեր է Էջմիածնէն: Էջմիածինին կապուած է առաւելապէս արտասահմանի հայ գաղութը: Ահա թէ ինչո՞ւ պէտք է ունենալ հանդիպումներ կաթողիկոսին հետ, հասկնալ զինքը և մտահոգուիլ Էջմիածնով միայն: Մոռնանք այն, որ երբեմն ան ստիպուած է իր տուրքը տալ: Մենք՝ արևմտահայերս, այդ պարագան պէտք է աւելի լաւ հասկնանք. մեր պատրիարքները Պոլսոյ երբեք վատ մարդիկ չեն, երբ իրենց տուրքը կը տանէին Համիտի շրջանին և կամ Նորին կայսերափառութեան նկարը կը հրատարակէին տարեգիրքերուն առաջին էջին վրայ: Այդպէս էր առաւելապէս ստալինեան շրջանին: Ըսել կ'ուզեմ՝ որոշ բաներ մենք պէտք է ներենք, ինչպէս կաթողիկոսի առաջին այցելու-

23 Տպագրվում է ըստ բնագրի, ԳԱԹ, ՀԽՖ, N 418:

24 Համաստեղը այս բառը միշտ այսպես է գրում:

25 Խոսքը Վազգէն Առաջին կաթողիկոսի մասին է:

26 «Հայրենիք» օրաթերթի 1967 թ. հունվարի 13-ի թվում կարդում ենք. «Երբ Էջմիածնայ Հայրապետը կ'այցելէր Ամերիկա և Քէյմպրիճի հայ եկեղեցւոյ սրահին մէջ հացկերոյք մը կը տրուէր ի պատիւ անոր, կաթողիկոսը բաղձանք յայտնած էր տեսնելու Համաստեղը: Երկուքը առանձնանալով երկարօրէն խօսած էին հայ գրականութեան մասին, Հայրենիքի և սփիւռքի մէջ: Տեսակցութիւնը այնքան երկարած էր, որ հացկերոյքի կազմակերպիչները սրտնեղութեամբ կը տեսնէին, որ եկեղեցւոյ պէտքը աւելի ևս հետաքրքրուած էր դաշնակցական գրագէտի մը հետ տեսակցելով, քան թէ իրենց հետ նստելով շիշքէպակի սեղանին շուրջ: Համաստեղ, այդ տեսակցութեան տպաւորութեամբ, մեծ յարգանք կը տածէր Վազգէն Ա կաթողիկոսի գրական ճաշակին հանդէպ»:

27 Նկատի ունի Մայր Աթոռի դիվանապետ Հայկ Առաքելյանին, որն ի պաշտօնէ պարտավոր էր Վազգէն Ա-ին առնչված անցքերի շուրջ տեղեկություններ փոխանցել խորհրդային համապատասխան մարմիններին (տես, օրինակ, «Անդրանիկ Ծառուկեանի առաջին այցելութիւնը Խորհրդային Հայաստան (փաստաթղթեր)», կազմող՝ **Գէորգ Նազըճեան**, Եր., 2008):

28 Խորհրդային Միության պետական անվտանգության մարմնի ռուսերեն անվանման կրճատ տարբերակն է:

29 Կարծրատիպ (ֆրանս.):

թիւնն էր Լիբանան<sup>30</sup> և մանաւանդ՝ մոռնանք: Իմ տպաւորութիւնը այն է, որ կաթողիկոսը կ'ուզէ տեսնուիլ մերիններուն հետ և տեսնուիլ մանաւանդ Զարեհ կաթողիկոսի<sup>31</sup> հետ և կ'ընդունի, որ Զարեհ պարկեշտ մէկն է: Այդ հանդիպումները աւելի մեծ դեր պիտի կատարեն Վազգէն կաթողիկոսին համար, քան արուր պատշաճի քարոզները և կոնդակները, որովհետև կոնդակներն ու քարոզները երբեք իրարու քով չպիտի կրնան բերել բաժնուած գծերը: Պատնէշներու վրայ են, որ կը խօսուին այդ բոլորը: Եւ արդէն տեսակ մը նախապաշարում ստեղծուած է, շնորհիւ պօլշակիկեան պաղ պատերազմի, **խաղաղութիւն, սէր, միութիւն** բառերու շուրջ:

Կը տեսնես, սիրելի Խաշման, որ ըսելիք շատ կայ:

Ուրեմն...

Կաթողիկոսին հետ ունեցած շատ հետաքրքրական և կարճ հանդիպումէս յետոյ ըսի, որ «Կը գրեմ ձեզի», ուզեցի մեր այդ կարճ հանդիպումի տպաւորութիւնը իրեն հաղորդել նամակով մը<sup>32</sup>: Նամակիդ մէջ գրած էիք, որ նորէն պիտի հանդիպիս կաթողիկոսին, երբ վերադառնայ Նիւ Եորք: Իմ կաթողիկոսին գրած նամակս մի քանի օրէ կը հասցնեմ քեզ, որ դուն ինքդ անձամբ տաս անոր. ուրիշ ապահով միջոց չունէի: Այդ նամակի մէջ կ'ուզեմ առանձնապէս ըսել, որ անպաման հանդիպի Զարեհ կաթողիկոսին, մերիններուն: Եւ այդ ներքին աշխատանքով է, որ միայն կարելի է իրար հասկնալ: Կ'ուզէի, որ այդ նամակը անձամբ կաթողիկոսին ձեռքը հասնի:

Էհ, շատ խօսեցայ: Արդէն երկու օրէն կը բացուի այդտեղի Պատգամաւորական ժողովը, և այդ ժողովը ինձ համար տակաւին գոց վարագոյր մըն է:

Սիրով՝ Համաստեղ

**Յ.Գ.** Ուրախ եղայ, որ Արփին ոչ միայն եկած է ՀՕՄ-ի Պատգամաւորական ժողովին, այլև ատենապետներէն մէկը եղած է: Մեզի գալու յարմարութիւն ունեցած է: Շատ կ'ուզէի տեսնել զինքը և սակայն առիթը չունեցայ:

## 5.

Փետրուար 11, 1964<sup>33</sup>

Սիրելի Համաստեղ,

Յունուար 12-ի նամակիդ չկրցայ ատենին պատասխանել: Աւելի ճիշդ՝ կը ցաւիմ, որ չկրցայ օգտուիլ քանի մը տող նորէն քեզ գրելու այդ «պատրուակ»էն:

Յուսամ՝ Սրբուհին աւելի լաւ է: Վերջերս անհանգստութիւններ մեր մօտ ալ անպակաս են: Բարեբախտաբար, Արփին ազատ է նման նեղութիւններէ: Կ'երևայ այդ բաժինն է Արուսեակին ու քիչ մըն ալ՝ իմ:

30 Վազգէն Առաջին արտասահման իր առաջին այցելությունը կատարեց 1956 թ. փետրվարին՝ Լիբանան՝ մասնակցելու Կիլիկիո կաթողիկոսի ընտրության: Կուսակցական պարտադրանքների պատճառներով, ընտրական կրթերի բորբոքման ի տես, նա փետրվարի 20-ին դառնացած լքեց Բեյրութը՝ առանց ներկա լինելու նույն օրը կայացած ընտրական նիստին:

31 Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Զարեհ Ա (Փայասյան, 1915-1963):

32 ԳԱԹ-ում Համաստեղի ֆոնդի 210-րդ համարում, պահվում են Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր խորհրդի ատենապետ Սահակ արք. Տեր-Հովհաննիսյանի 2 նամակները Համաստեղին: Գրողի ձեռագրերում պահպանված սևագիր թերթերը, Հակոբ Խաշմանյանին հասցեագրած մի քանի նամակները հաստատում են Վազգէն Առաջինի հետ գրողի նամակագրության փաստը, բայց այդ նամակները գտնել չհաջողվեց: ԳԱԹ-ում՝ ՀԽՖ-ի 282-րդ համարում, պահվում են Հակոբ Խաշմանյանի 22 նամակները Վազգէն Առաջինին, իսկ նույն ֆոնդի 536-րդ համարում՝ Վազգէն Առաջինի 10 նամակները Հակոբ Խաշմանյանին:

33 Տպագրվում է ըստ բնագրի, ԳԱԹ, ՀՖ N 123:

Հւմ, չմոռնամ հարցնել: «Հայրենիք»ի մէջ քու մէկ հրատարակութեան ծանուցումը տեսայ<sup>34</sup>: Երբ կ'ուզէի գրել քեզ այդ մասին, տեսայ որ «Շրջանաւարտներու միութիւն» մըն է հրատարակողը, Պոլիս: Պիտի ուզէի գիտնալ, թէ նիւթապէս կապ մը կամ հաշիւ մը ունի՞ն այդ հրատարակութեան կապուած:

Յետոյ, ինչ եղաւ գրեթէ պատրաստ գործը<sup>35</sup>, լրացուցմծ ես բոլորովին: Հրատարակելու որևէ կարելիութիւն կայ: Ինչ կը կարծես:

Ընդհանրապէս լաւ ենք: Բայց պէտք է ընդունիմ, որ այս տարի ցաւեցայ, որ հոս մնացի այս ցուրտերուն: Հոգ չէ, թէ որքան մեղմ եղաւ ցուրտ ձմեռը, այս տարի նեղուեցայ: Տաքին կարօտը կամ պէտքը կը զգամ յաճախ:

Պէտք է համբերեմ ու այսպէս շարունակեմ՝ սպասելով մեր շրջանի ... տաքերուն կամ լաւ եւ՝ աղուոր օրերուն:

Լորիկը անշուշտ միշտ հոն է՝ Ուաշինկթըն: Տունէն դուրս գտնուելու ... ազատութիւնը իրեն համար ուրիշ փորձութիւն մըն է: Եւ լաւ է, կը կարծեմ:

Է, աղուոր չարչարանք մըն ալ Արմինէինն է՝ պայքար տառերուն հետ կամ յանուն տառերուն<sup>36</sup>:

Մեր երեքին սէրն ու ջերմ զգացումները ձեր բոլորին:

Սիրով՝ Խաչման

## 6.

Մարտ 8, 1964<sup>37</sup>

Սիրելի Խաչման,

Ես արդէն գրեցի Վրացեանին, որ չպիտի կրնամ գալ<sup>38</sup>: Երբեք հաւաս<sup>39</sup> չունիմ երթալ: Նման փառասիրութիւնները վաղուց կորսնցուցած եմ: Այժմ հանդարտութիւնը ինձ համար աւելի կարևոր է և աւելի հաճելի: Նախ՝ պարապ ծախս է, ըսել կ'ուզեմ՝ իմ երթալը չի արդարացնէր: Եթէ ճամբորդութիւն մը կ'ուզեմ ընել, ան ալ Հայաստան երթալն է, և սակայն այդ ճամբորդութիւն ընելն ալ աչքս չի կտրէր: Այլ էր, թէ ես իմ ծախսովս երթայի, եթէ հնարաւորութիւն ունենայի, սուսիկ-փուսիկ և այդպէս ալ վերադառնայի: Ցոյցեր և պաշտօնականութիւններ չեմ սիրեր: Ըիշդ է,

34 Խոսքը Համաստեղի «Պատմութիւններ և հեքեաթներ» ժողովածուի մասին է, որ լոյս է տեսել 1963 թ. Պոլսում. հրատարակել է Պոլսի Արամեան սանուց միութիւնը: Համաստեղը դժգոհ էր գրքից և Հակոբ Մնձուրու (Տեմիրձյան, 1886-1978) գրած կցկտուր առաջաբանից (տես Համաստեղի՝ 1964 թ. մարտի 3-ին Արամ Հայկազին հասցեագրած նամակը «Նամակների»-ում՝ 223-րդ էջում):

35 Խոսքը «Առաջին սեր» վիպակի մասին է, որ լոյս է տեսել 1966 թ. Բեյրութում:

36 Տէն 3-րդ նամակի 4-րդ ծանոթագրութիւնը:

37 Տպագրվում է ըստ քնագրի, ԳԱԹ, ՀԽՖ, N 418:

38 Սիմոն Վրացյանը 1964 թ. հունվարի 14-ին Համաստեղին գրած նամակում հարցնում է՝ կարո՞ղ է ամռանը գոնէ մեկ ամսով այցելել Լիբանան: 1965 թ. դեկտեմբերի 17-ին նա գրել է Համաստեղին, որ «Համագգային»-ի կենտրոնական վարչութիւնը որոշել է նշել նրա հոբելյանը Բեյրութում, սպասում են Համաստեղի հոբելյանական հանձնաժողովի պատասխանին: «Ես կը մտածեմ, որ մինչև յոբելեանի օրը, իբրև «Համագգային»ի նուէր, լոյս ընծայել քո նոր վէպը, եթէ յօժար ես և ձեռագիրը հասցնես մեզ ժամանակին: Չգիտեմ ինչ «նոր մօտեցում» ունես, բայց քո կոշումը բանասիրութիւնը չէ, այլ՝ գեղեցիկ գրականութիւնը: Կ'ուզէի, որ յոբելեանիդ առթիւ մի նոր հատորով ներկայանայիր հասարակութեան: Կը խնդրեմ նաև, որ, որքան կարելի է շուտ գրես ինձ, թէ էրբ և որքան ժամանակով կարող ես գալ Լիբանան ներկայ լինելու յոբելեանական հանդէսին, որպէսզի պաշտօնական հրատարակութեանը: Ինչպէս պատկը առանց փետայի չ'ըլլար, այնպէս և յոբելեանը չ'ըլլար առանց յոբելեարի»: Իսկ 1966 թ. մարտի 8-ին գրած նամակում Ս. Վրացյանն առաջարկում է Համաստեղին համաձայնություն տալ իր հոբելյանից առաջ նոր հատոր հրատարակելու իրենց ծրագրին. խոսքը նույն թվականին Բեյրութում հրատարակված «Համաստեղ. Երկեր, և հատոր» գրքի մասին է (առաջաբանը գրել է Մուշեղ Իշխանը):

39 Ցանկություն:

որ այնտեղ՝ Լիբանան, այցելողներու ցուցական բնոյթը երբեք քաջալերական չէ ինձ համար: Անհամցուցին, ինչպէս գրած էիր: Կը հասկնամ Վրացեանի, Փափագեանի<sup>40</sup> և այդտեղի մտաւորականներու փափաքը: Այդ բոլորին մէջ կարևորը իմ փափաքն է: Ես երբեք նման փափաք մը չունիմ և **կը խուսափիմ:**

Կը յուսամ՝ լաւ է Արուսեակին և քու առողջութիւնը:

Բարևներ քեզ, Արուսեակին Սրբուհու և Արմինէի կողմէն:

Սիրով՝ Համաստեղ

**3.9.** Կ'երևի՝ այս կողմերը<sup>41</sup> գալու միտք չունիս: Լաւ պիտի ըլլար երբեմն տեսնուելիս:

## 7.

Օգոստոս 19, 1964<sup>42</sup>

Սիրելի Խաշման,

Հաճոյքով ստացանք անառանցէն քարդդ: Կը յուսամ՝ լաւ ժամանակ ունեցար, և նպաստաւոր եղաւ քու և Արուսեակի առողջութեան: Անցեալ շաբաթ օր Մասիսը<sup>43</sup> հանդիպեցաւ մեզ և խօսեցաւ, որ քեզ հանդիպած է Արամ Հայկազի տան մէջ և միասին նախաձաձ ըրած էք: Ցոյց տուաւ նաև քու և Հայկազի՝ իր գծած նկարները, ըսաւ, որ յետոյ պիտի աշխատի իր նկարներու վրայ: Ըսել կ'ուզէ՝ քարդունի<sup>44</sup> պէս կտրած է, ինչ որ իր գիծն է: Լաւ մէկն է և պէտք է ըսել, որ բաւական յաջող քարդունիստ է: Ինչպէս կ'երևի, կը մօտենայ Հայաստան երթալդ<sup>45</sup>: Իրաւ, ինչ լաւ բան կ'ընես: Ես ինքս չեմ կրնար բացատրել, թէ ինչո՞ւ այդ քաջութիւնը չունեցայ: Հեռաւոր ձևով միայն կրնամ բացատրել, որ եթէ ես ինքս ունենայի այդ նպատակի համար 2000 տոլար մը, առանց վարանումի կրնայի ձամբայ ելլել. բոլորովին անկախ հրաւերէն՝ կախուած բան մը կայ և այդ չափով մը ետ կը պահէ զիս և

40 Խմբագիր, թատերական և կուսակցական գործիչ, մասնագիտությամբ բժիշկ Բարկեն Փափագյան (1915-1990):

41 Այսինքն՝ Բոստոն:

42 Տպագրվում է ըստ բնագրի, ԳԱԹ, ՀԽՖ, N 418:

43 Ականավոր երգիծանկարիչ և գեղանկարիչ Մասիս Արարատյան (ծնվ. 1929 թ.): «Նայիրի» պարբերաթերթի 1964 թ. դեկտեմբերի 20 և 27-ի, 1965 թ. հունվարի 17-ի համարներում տպագրված են Համաստեղի, Արամ Հայկազի և Հակոբ Խաշմանյանի ծաղրանկարները՝ «Մասիս» ստորագրությամբ:

44 Երեխաների պատկերավոր պատումներ, մուլտիպլիկացիա (անգլ.):

45 Հակոբ Խաշմանյանը Հայաստան է հասել 1964 թ. սեպտեմբերի 30-ին և Հայրենիքում մնացել 21 օր: Նա Խորհրդային Հայաստան է բերել Արամ Հայկազի «Նահապետը» հոդվածը, որը լույս է տեսել «Հայրենիք» թերթի 1964 թ. հոկտեմբերի 7-ի և «Գրական թերթ»ի նոյեմբերի 6-ի համարներում: Տես «Արամ Հայկազ. Մոռացված էջեր» գրքի Գ հատորում (Եր., 2013)՝ էջ 106-110: «Սովետական Հայաստան» ամսագրի 1964 թ. 12-րդ համարի 23-րդ էջում տպագրված է «Միյունքահայության հետ մշակութային կապի կոմիտեում» հոդվածը, որից տեղեկանում ենք, որ 1964 թ. հոկտեմբերի 12-ին մի խումբ ամերիկահայ գրոսաշրջիկների հետ Վարդգես Համազասպյանին այցելել են «հայտնի հասարակական գործիչներ Սեդրակ Շահենն ու Հակոբ Խաշմանյանը»: Հակոբ Խաշմանյանը Երևանից մեկնել է Իրան, Իրաք, Քուվեյթ, Լիբանան, հետո՝ Ֆրանսիա: 1964 թ. նոյեմբերի 3-ին նա Իրանից գրել է Համաստեղին. «Հայր ամէն տեղ ալ մարդակարօտ է ու մանաւանդ՝ հայակարօտ: ... Քու մասին ու Արամ Հայկազի մասին ջերմ խօսակցութիւն եղաւ Մահարիի հետ ևս: Ու նաև Հրաչեայ Քոչարի հետ: Մեղք, որ միայն մէկ անգամ – ան ալ՝ վեցամսեայ հիւանդութենէ մը դուրս գալու առաջին օրը միայն – Համազասպեանի հետ՝ վերջինի գրասենեակին մէջ: Համազասպեանին ևս ծանօթ ես: Եւ գործիդ մասին ունէր հետաքրքրական մտքեր»: 1964 թ. դեկտեմբերի 21-ին Խաշմանյանն Իրաքից գրել է Համաստեղին. «Որքան մեծ կ'ըլլայ հաճոյքս, երբ անսպասելի տեղեր մարդոց կը հանդիպիմ, որ ծանօթ կ'ըլլան ոչ միայն անունիդ, այլ նաև գործերդ ոմանց»: 1965 թ. հունիսի 5-ին նա գրել է Վազգեն Առաջին կաթողիկոսին, որ տուն է վերադարձել մայիսի 31-ին, և հավելել. «Լրիւ 8 ամիս տևեց պտոյտս»:

սակայն ինչ ալ ըսեմ, միայն հրաւերով կրնամ երթալ: Միշտ ալ կը յուսամ, որ հրաւերը բաց է տակաւին: Մէկ տարի առաջ, Սայեաթ Նովայի հանդիսութեան<sup>46</sup> առիթով երրորդ հրաւերը ստացայ, երբ ես պատրաստ չէի: Մի քիչ երկչոտութիւն կայ իմ մէջ: Եւ որովհետև օրը օրին հասած եմ իմ տան նիւթական բաւարարութեան, կը կարծեմ, որ երկար ճամբորդութիւն մը մի քանի շաբաթներ աւելի, այդ բաւարարութեան ներդաշնակութիւնը պիտի խանգարէ: Իմ օրուայ մտահոգութիւններուն հետ խառնուած բան մըն է, զգացումին հետ խառնուած, որ կրնայ շատ ալ կարևոր արժէք չունենալ: Վերջին հրաւերին չգիտէի ինչ ըսել, այնքան ճնշուած կը զգայի, որովհետև չէի կրնար ընթացք տալ հրաւերին: Ճիշդ էր, որ այդ աշնան թեթև խնդիր մը ունէի՝ աչքի կոպերու շատ գէշ բորբոքում մը ունեցայ. կը կարծէի, որ ծանր կրնար ըլլալ, բարեբախտաբար, թեթև բան մըն էր, թէև երկու անգամ կրկնուեցաւ: Եւ այդ պատճառ ըրի: Թէև պատճառներէն մէկն էր: Անշուշտ, գլխաւոր պատճառը ինքզինքս չի կրնար հաւաքելն էր, և ես ստիպուեցայ գրել, որ «Ես ինքս կ'իմացնեմ թէ երբ կրնամ Հայաստան գալ»: Էհ, կ'երթաս Հայաստան, երանիք եղ: Գիտեմ, որ պիտի տեսնես կաթողիկոսը: Չեմ ուզէր այն տպաւորութիւնը ունենայ, որ ես կը խուսափիմ «ընթացք տալ իր հրաւերին»: Այդպէս պատասխանած էր Գուրգէն Մահարիին, երբ Մահարին, ինքն իր գլխին, առանց ծանօթ ըլլալու հրաւերներու, նամակ գրած է կաթողիկոսին, որ զիս Հայաստան հրաւիրեն: Կ'ուզեմ, որ այդ «խուսափումի» տպաւորութիւնը ձևով մը սրբազրես, եթէ ... կաթողիկոսը խօսք բանայ հրաւերի մասին: Այնտեղ անպայման կը տեսնես Գուրգէն Մահարին և իմ կողմէ եղբօր մը պէս կը համբուրես: Կը թղթակցիմք իրարու հետ<sup>47</sup>: Այնտեղ կը տեսնես «Ոսկան Երևանցի» վէպի շնորհալի հեղինակ Յովհաննէս Ղուկասեանը<sup>48</sup>: Այդ վէպի մասին իմ գրախօսականի առիթով գրած էր ինձ: Կը բարևես, չեմ ըսեր՝ կը համբուրես տիկին Բերսաբէ Գրիգորեանը<sup>49</sup>, որուն հետ թղթակցութիւններ ունեցած եմ, մանաւանդ Եղիա Գասպարեանի նկարներուն առիթով<sup>50</sup>: Ան ինձ կը դրկէ գրքեր Հայաստանի հրատարակութիւններէն: Այդ շատ

46 Սայթ-Նովայի ծննդյան 250-ամակը Երևանում նշվել է 1963 թ. հոկտեմբերի 26-ին:

47 Ամերիկայի Առաջադիմական միության նախագահ Օգեսն Սարյանի միջոցով Համաստեղը բանավոր բարև է ուղարկել Գուրգեն Մահարուն (Աձեմյան, 1903-1969), որը պատասխանել է 1963 թ. դեկտեմբերի 29-ին գրած նամակով:

48 Հովհաննէս Ղուկասյանի (1919-1991) «Ոսկան Երևանցի» վէպի մասին Համաստեղի նույնանուն հոդվածը լույս է տեսել «Հայրենիք» օրաթերթի 1963 թ. ապրիլի 7-ի, 9-ի, 10-ի և 11-ի համարներում, ստորագրված է՝ Օհան Ծոփեցի (տնս «Համաստեղ». Մոռացված էջեր», հատոր Բ, Եր., 2005, էջ 141-148): ԳԱԹ-ում պահվում են Հ. Ղուկասյանի 4 նամակները Համաստեղին: 1963 թ. սեպտեմբերի 27-ին նա գրել է Համաստեղին, որ Արտասահմանի հետ բարեկամության և մշակութային կապերի հայկական ընկերության (ԱՕԿՄ) միջոցով ստացել է իրեն հասցեագրված «հույժ ուրախություն պատճառող նամակը, որով հայտնում էիք «Վիպակներ»-իս ստացման և այն մասին, որ գրախոսել եք «Ոսկան Երևանցի» պատմավեպս «Հայրենիք»-ի մեջ»: «Ինձ համար և՛ զարմանալի, և՛ նույնքան տրամաբանական էր այն պարագան, որ գրախոսականի մեջ Դուք գուշակել էիք, թե կարող է պատահել, որ ես պարսկահայ լինեմ: Իրավ է, չեք սխալվել: Ծողոներս քնիկ պարսկահայեր էին՝ Սայմաստի Փայաջուկ գյուղից. տատս (մորս մայրը)՝ Ալմաստը, Բաֆֆու չորրորդ քույրն էր, իսկ ես ծնվել եմ Թավրիզում, 1919-ին և հայրենիք եմ ներգաղթել 1946 թվականին»,- գրում է Հովհաննէս Ղուկասյանը: Նա Համաստեղին անվանում է «մեր օրերի Զոհրապ» և պատմում, որ հիացած է նրա «անգուգական նովելներով», «գոհարների անջնջելի ֆրեսկոներով»: 1965 թ. մարտի 10-ին Ղուկասյանը գրում է, որ ստացել է Համաստեղի ուղարկած երկու ծրար գրքերը, ուրախությամբ կիյուրընկալի նրան իր տանը: «Դուք, թանկագին Համաստեղ, ինչպէս Ձեր խոնարհագույն ու համեստ Փիլիկ աղբարները, Տափան Մարգարները ու Երանոսները, թավշային միամտությամբ երևի չեք զգում, թե ինչ մեծ ծառայություն եք մատուցել մեր գրականությանը, և ոչ միայն մեր գրականությանը, այլև՝ համաշխարհային, որովհետև աշխարհը պիտի ծանաչե Ձեզ, պիտի ծանաչե ու զգա հայոց դպրության սրբությունը, եթե երբևիցե և ամբողջովին նա իրավունք ունենա աշխարհ կոչվելու»,- շարունակում է Ղուկասյանը:

49 Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապերի հայկական ընկերությունը հիմնվել է Երևանում, 1944 թ. նոյեմբերի 20-ին: 1958-1966 թ. վերջերը Բերսաբէ Գրիգորյանը (1915-2003) այդ ընկերության նախագահության նախագահն էր:

50 Իր մտերիմ ընկերոջ՝ գեղանկարիչ, դրամատուրգ Եղիա Գասպարյանի (1893-1948) գեղանկար-

կը գնահատեն: Ըսել կ'ուզեմ՝ եթէ հանդիպիս:

Սրբուհին և Լորիկը այս շաբթու վերջը արդէն կը մեկնին Եւրոպա՝ երեք շաբաթուայ համար: Սիրալիլ բարևներ Արուսեակին, սիրելի Արփիին՝ մերիններուն կողմէն:

Սիրով՝ Համաստեղ

## 8.

Սեպտեմբեր 5, 1964<sup>51</sup>

Սիրելի՛ Համաստեղ,

Երէկ վերջապէս յայտնի եղաւ մեկնումիս թուականը – սեպտեմբեր 30<sup>52</sup>:

Ստացայ վերջին նամակդ (կարծեմ գրեցի քեզ այդ մասին՝ Սրբուհու մեկնումէն առաջ հասցուցած երկտողովս):

Այժմ յայտնի կ'ըլլայ, որ կաթողիկոսը Հայաստան պիտի գտնուի, գոնէ յետաձգած է Եթովպիա երթալը:

Շատոնց է, որ քանի մը տող կ'ուզէի գրել իրեն: Այսօր գրեցի: Դժբախտաբար մինչև չորեքշաբթի օր պէտք է սպասեմ, որ ապահովագրուած ղրկեն:

Յայտնեցի իրեն բառով, որ եթէ հնար ըլլայ, պիտի փափաքէի գոնէ 2 շաբաթի չափ մնալ Երևան:

Կը տեսնեմ գինքը յարմար առիթով, կը խօսիմ իրեն քու մտածումներուդ մասին:

Եթէ անյարմարութիւն մը չես տեսնար, թերևս լաւ է, որ մէկին կամ միւսին – մանաւանդ տիկին Գրիգորեանին – հոգ չէ այժմ տարբեր պաշտօն ունի ան<sup>53</sup> – գրես, թէ այսինչ թուականի խումբով ... համ ալ քու մէկ բարեկամը և այլն: Ատիկա կրնայ աւելի լաւ ըլլալ, քան թէ իմ երթալս ու ... ինքզինքս ներկայացնելը<sup>54</sup>:

Այսօր քանի մը տող գիր ստացայ ընկեր Բարգէն Փափագեանէն: Կը գրէ. քանի մը հոգի ալ Պէյրութի Բժշկական միութեան կողմէ պիտի երթան<sup>55</sup>, թէ ինքն ալ

ներից 14-ը Համաստեղը Օգսեն Սարյանի և Վահան Ղազարյանի միջոցով ուղարկել է Հայաստան («Նամականի»-ում տե՛ս Համաստեղի նամակագրութիւնը Բերսաբե Գրիգորյանի և Վարդգես Համագասպյանի (1911-1992) հետ): Համաստեղի ջանքերով 1959 թ. Կահիրեում լույս տեսավ Եղիա Գասպարյանի «Տրդատ և ուրիշ տասը թատերգութիւններ» գիրքը: Ստեփան Տարտունին (Տեր-Սաթևոյան, ?-1988) «Հ.Յ.Գ. Յիշատակարան Հիւսիսային Ամերիկայի. 1899-1964» գրքի 67-րդ էջում գրում է, որ Եղիան «առանց Համաստեղը գէթ օրուան մէջ մէկ անգամ տեսնելու չէր կրնար ապրիլ-գիտէր՝ ուր կրնայ գտնել»:

«Հայրենիք» ամսագրի 1949 թ. 2-րդ համարում տպագրված է Համաստեղի հոդվածը՝ նվիրված Եղիա Գասպարյանի հիշատակին: «Մահն աւելի կը մօտենայ և աւելի ահաւոր պարագայութիւն մը կը դառնայ, երբ կը մեռնի մօտաւոր մը: Եղիայի մահուան շունչը զգացի իմ մօտ», – գրում է նա:

«Յուշանատեան»ի 11-րդ էջում Համաստեղի կավճանկարն է, որի հեղինակը Եղիա Գասպարյանն է (նկարված է 1923 թ.): Այդ նկարով ենք ձևավորել «Նամականի»ի կազմը:

51 Տպագրվում է ըստ բնագրի, ԳԱԹ, ՀՖ, N 123:

52 Տե՛ս նախորդ նամակի 2-րդ ծանոթագրությունը:

53 Նամակի հեղինակը սխալվում է: Հավանաբար նկատի է ունեցել այն, որ 1964 թ. հունիսի վերջին Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գոյացումով՝ սփյուռքահայության հետ հարաբերությունները ԱՕԿՄ-ից փոխանցվել էին այդ կոմիտեին:

54 1964 թ. սեպտեմբերի 14-ի նամակում Համաստեղը գրում է Բերսաբե Գրիգորյանին. «Կը գրեմ այս տողերը՝ առանձնապէս ըսելու համար, որ իմ մօտ և երկար տարիներու բարեկամս՝ Յակոբ Խաչմանեան, այս ամառ՝ սեպտեմբեր 30-ին, խումբի մը հետ ծամբու պիտի ելլէ Հայաստան գալու համար: Ան կը բնակի Նիւ Եորք: Գրեցի անոր, որ առաջին առիթով գալ ձեզի և մեր մշակոյթի և գրականութեան վարպետներուն: Այնքան հոգով հետևած է անոնց: Անձնական ծանօթներ չունի Հայաստանի մէջ՝ հակառակ անոր, որ իր օրուայ և հոգեկան ապրումներուն մէջ եղած են Հայաստանն ու հայ ժողովուրդը: Խաշմանեան մեր ազնուական մտաւորականներէն է և հաւատքին մէջ այնքան ջերմ»:

55 Լիբրանանհայ բժշկական միության պատվիրակությունը Խորհրդային Հայաստանի առողջապա-

անոնց մէջ է, որովհետև «հաւանաբար կրնանք տեսնել գիրար» կը գրէ:

Լաւ է թերևս այս պարագան, գոնէ ատեն մը, դուրս քեզ պահես: Չեմ կարծեր, որ գաղտնի պահելու բան է, բայց չեմ ուզեր, որ ուրիշներ ... ինձմէ գիտնան:

Ինչ մտքեր որ ունիս, գրէ՛ ինձ:

Սիրով՝ Խաշմանեան

## 9.

Օգոստոս 1, 1965<sup>56</sup>

Սիրելի՛ Խաշման,

Ստացած եմ երկու լեցուն նամակներդ: Կը տեսնեմ, որ Հայաստան այցելութիւնդ այնքան բարի տպաւորութիւն ըրած է քու վրայ: Ինչքան սխալներ ըրինք՝ իրարու հետ խառնելով պօլշեիզմը և Հայաստանը, ինչքան խորթացուցինք մեր շարքերը Հայաստանին հետ և օր մըն ալ չի փորձուեցանք **մեր Հայաստանը** ըսել, ու ժողովուրդ մը՝ **մեր ժողովուրդը ներքին պայքարներով դիմացաւ և հաստատեց ինքզինքը**: Այսօրուան հայրենասէրները և հայրենաշունչ գրողները տեսած են Սիպիոնը և իրենց ապրումներուն հետ տառապած: Ատենն է, որ ընդունինք, թէ լաւ բաներ կը կատարուին, և չի շփոթենք մեր պայքարը: Մեր պայքարը միացնենք հայ ժողովուրդի պայքարին հետ: **Պայքարին պօլշեիզմին, Մոսկուայի դէմ և արդէն մեր պայքարը խառնած կ'ըլլանք մեր ժողովուրդի պայքարին հետ**, ժողովուրդ, որ չի կրնար պոռալ: Ինչ ալ ընենք, գաղութը հետզհետէ կը մաշի, նոյն մաշումին հետ կը դժգունի դաշնակցութիւնը: Այսօր ունինք Կ. Կոմիտէ մը, որ հայերէն չի գիտեր՝ մամուլին հետևելու համար: Մեր մամուլը կը տկարանայ՝ ինքզինք կրկնելով: Առիթ պէտք է ստեղծել, որ մեր դաշնակցական երիտասարդ սերունդը Հայաստան տեսնայ ու զգայ, որ բառերու և ճառերու հետ չէ դաշնակցութիւնը: Այդ փոխադարձ յարաբերութեան մէջ է, որ պիտի թարմանայ դաշնակցութիւնը, և ես կը յուսամ, որ այնտեղ՝ Հայաստանի մէջ, կայ այդ խմորը: Օտարացանք, Խաշման, և հոգեկան Հայաստանով բաւարարուեցանք: Դաշնակցութիւնը այսքան երկար գաղութներուն մէջ չպէտք էր մնար: Յիսնամեակը լաւ տարուեցաւ<sup>57</sup>: Հայաստանի մէջ կատարուած յիսնամեակը շատ լաւ կամուրջ մը եղաւ Սփիւռքի և Հայաստանի միջև: **Կը հաւատամ, որ անոնք մտահոգուած են Սփիւռքով և կ'աշխատին ջերմացնել կապը**: Ամեն բան փրօպականտայով չի բացատրենք:

Գալով իմ 70-ամենակին: Ես ինքս ալ չգիտցայ, թէ երբ հասայ այդ տարիքին: Բան չեմ ակնկալեր հայ ժողովուրդէն և սակայն կը տեսնեմ, որ անհատ բարեկամներէ յիշեցումներ կ'ըլլան 70-ամեակի: Մի քանի տարի առաջ՝ երեք տարի, յոբելանի խօսքը եղաւ Քալիֆոռնիայէն և սակայն մարեցաւ: Ես տէր չեղայ: Յամենայն դէպս, իրենց գործն է, եթէ ուզեն ձեռնարկել: Ես ըսելիք չունիմ: Երկու տարի առաջ Watertownի<sup>58</sup> կոմիտէն, ինձմէ գաղտուկ, այդ տեսակ որոշում մը տուած է, որ գրեն Կ. Կոմիտէին: Երբ իմացայ, ըսի, որ մոռնան, որովհետև կողմնակի ձեռնարկ չեմ ուզէր, եթէ համազգային բնոյթ չունի: Եթէ Կ. Կոմիտէն կամ Առաջնորդարանը չեն հետաքրքրուիր այդ հարցով, ըսի, որ մոռնան, որովհետև չի հաւատացի, որ լաւ բան պիտի կրնան ընել: Իսկ դաշնակցութեան համար յոբելան մը իր մէկ ընկերոջ, որ իր բոլոր վաստակը դաշնակցական մամուլին տուած է, որ վերջապէս

հուրան նախարարության հրավերով Երևան տասնօրյա այց կատարեց 1964 թ. հոկտեմբերի սկզբին: 56 Տպագրվում է ըստ բնագրի, ԳԱԹ, ՀԽՖ, N 419:

57 Խոսքը Մեծ եղեռնի հիսնամյակի մասին է:

58 Բոստոնի արվարձաններից է:



բոլորն ալ, ոչ դաշնակցականներն ալ, կ'ընդունին դաշնակցական Համաստեղի մը արժէքը, մերիններուն համար կարծես կարմիր լաթ է: Նոյնիսկ ռամկավար գրողներէն թելադրութիւններ եղած են, որ պէտք է նշել Համաստեղին յոբելեանը: Բարեկանս՝ Մահարին յաճախ կը գրէր, որ «երթ Հայաստան գաս և պէտք է, որ գաս, այստեղ կը տօնենք քու 70-ամեակը»: Միտքս այս տարի երթալն էր, նոյնիսկ զուգադիպեցաւ Էջմիածնի հրաւերը: Պիտի երթայի ոչ թէ յոբելեանի համար, այլ՝ իմ փափագը լրացնելու և հրաւերներուն ընթացք տալու համար: Իսկապէս, ինչքան անձարակութիւն իմ կողմէն, որ չի կրցի երթալ: Այս տարի արդէն չէի կրնար երթալ Սրբուհուն հիւանդութեան պատճառով: Ճիշդ է, Սրբուհին ոտքի վրայ է և սակայն լաւ չէ, յոյսին հետ կապած ենք անոր լաւ ըլլալը: Կը գրես, որ քեզ հարցուցած են իմ ծննդեան թուականը: Ամիսներ առաջ Կապուտիկեան<sup>59</sup> իմ կենսագրականը և նկարը ուզած էր: Ղրկեցի կարճ բան մը և սակայն ստացած ըլլալը չիմացուց: Գուցէ կորսուած է: Ուրեմն իմ ծննդեան թուականն է 1895 հոկտեմբեր 15: Հոկտեմբերին կ'ըլլան 70 տարեկան: Լաւ կ'ըլլար, որ տեղ մը հանդիպէինք իրարու:

Բարևներ Սրբուհիէն քեզ, Արուսեակին և սիրելի Արփիին:

Սիրով՝ Համաստեղ

**3.4.** Սպասեցի, որ Սրբուհին հիւանդանոցէն տուն գայ, որ երկու շաբաթ արձակուրդ ունենանք: Մէկ շաբաթ ամառանոց գացինք, և սակայն Սրբուհին լաւ չէր զգար. մէկ շաբաթ է, որ տունն ենք, քիչ մը աւելի լաւ կը զգայ: Վաղը արդէն գործի պիտի սկսիլ<sup>60</sup>: Այս գործելը կարծես հետզհետէ կը ծանրանայ: Առայժմ միտքս 3 տարիէն գործէն քաշուիլ է:

## 10.

**Օգոստոս 31, 1965<sup>61</sup>**

Սիրելի Խաշման,

Կը տեսնեմ, որ գործի վրայ ես: Նամակիդ մէջ ըսած չէիր, թէ ինչպէ՞ս է Արուսեակը: Ենթադրեցի, որ լաւ է, և կը յուսամ, որ լաւ է: Սրբուհին, օգտուելով իր լաւ զգալու շրջանէն, Ֆիլատելֆիա գնաց 10 օրուայ համար:

Գրած ես Էջմիածին և «Մշակութային»-ին<sup>62</sup>: Չգիտեմ, թէ ինչ կրնան ընել, երբ **մինչև հիմա իմ աշխատանքներէն Հայաստանի մէջ որևէ բան հրատարակած չեն**, մինչ դու կը մտածես, որ կարելի է իմ պատմութեան թարգմանել տալ նաև ռուսերէն<sup>63</sup>: Քարի պէս կարծրացած են այնտեղ իմ գրականութեան հանդէպ, աւելի ճիշդ՝ իմ դաշնակցական ըլլալուս համար: Կ'ուզեն իմ գրքերը, ուզեցին իմ նկարը և կենսագրականը: Չգիտեմ՝ ինչո՞ւ համար: **Անոնք կ'ակնկալէին, որ Հայաստան այցելէի, անկէ վերջ գուցէ փոխուէր ինձ հանդէպ ունեցած իրենց վերաբերմունքը և գուցէ տօնէին նաև իմ 70-ամեակը:** Մահարին յաճախ կը կրկնէ այդ, որ «երբ գաս այստեղ կը տօնենք քու 70-ամեակը»: Այս տարի շատ

59 Սիլվա Կապուտիկեանը (1919-2006) Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահության անդամ էր և կոմիտեին կից գրական հանձնախմբի նախագահը:

60 Համաստեղը տպարանում ցինկոգրաֆ էր աշխատում:

61 Տպագրվում է ըստ բնագրի, ԳԱԹ, ՀԽՖ, N 419:

62 Խոսքը Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի մասին է:

63 1989 թ. Երևանում հրատարակվել է «Զանգակների գանգերը» („Звон колоколов,“) ռուսերեն ժողովածուն, որտեղ զետեղված են Համաստեղի «Անձրև», «Տափան Սարգարդ», «Զրոյց շունի մը հետ» պատմվածքների թարգմանությունները: Հակոբ Խաշմանյանի նամակները վկայում են, որ Համաստեղի «Քաջ Նազարը» թարգմանվել է ռուսերեն, բայց չի հրատարակվել: Լորիկ Համաստեղը մեզ գրել է Համաստեղի պատմվածքների անգլերեն թարգմանությունների և թուրքերեն ժողովածուի վերաբերյալ:

կ'ուզէի, ոչ անոր համար, որ 70-ամեակ պիտի տօնէին, այլ անոր համար, որ **կ'ուզէի մեր Հայրենիքին և մեր ժողովուրդին մօտ ըլլալ**: Բայց որ չկրցի Սրբուհու իսկապէս ծանր հիւանդութեան պատճառով: Էջմիածին գրելէ քիչ մը աւելի համազգային բնոյթ կը ստանայ, եթէ գրուի Անթիլիաս՝ Խորէն կաթողիկոսին<sup>64</sup>: Ան ալ իր կարգին կրնայ թելադրել ամերիկահայ Առաջնորդարանին: Մեր Կ. կօմիտէին շատ հաւատ չունիմ, և հասած ենք մինչև այն տեղ, որ Կ. կօմիտէի անդամները հայերէն չգիտեն կարողալ ալ, ուր մնաց, որ գնահատեն հայ գրող մը:

Իմ պատմութիւններէն բաւական բաներ թարգմանուած են Armenian Weeklyի և Reviewի<sup>65</sup> մէջ – հատոր մը ըլլալու չափ: Չեմ կրնար ըսել, որ յաջող թարգմանութիւններ են, մասնաւորապէս որ դժուար է անգլերէնով տեղական գոյները տալ: Բայց մոռնանք այդ, որովհետև դժուարութիւններու հետ կապուած է, այլև եթէ աշխատուի մէկ-երկու լաւ թարգմանութիւնը տեղաւորել ամերիկեան ամսագրերուն մէջ: Կարելի է մոռնալ հատորի մը հրատարակութիւնը, որովհետև, ինչպէս ըսի, դժուարութիւններու հետ կապուած է, այլ թէ ամերիկահայ գրասէր մը ուզէ անձնապէս հետաքրքրուիլ այդ գործով, ինչպէս մէկը թարգմանեց Թոթովենցի պատմութիւնները և հրատարակուեցան առանձին հատորով<sup>66</sup>, թէև եղածին պէս ալ մնաց, ըսել կ'ուզեմ՝ ուշադրութիւն չի գրաւեց, և կամ հրատարակողը ծանօթ հրատարակիչ մը չէր: Վազ անցնինք այլ լեզուներով ներկայացնելէն: Տեսնենք՝ մեր հայերէնովը իր պատշաճ գնահատութիւնը պիտի ստանայ, եթէ ելլենք 70-ամեակ մը տօնենք: Հայաստանի մէջ այնքան ընդհանրացած են նման տօնակատարութիւնները, դաշնակցութենէն զատ՝ նաև ուրիշ ընկերութիւններուն և կուսակցութիւններուն մէջ. կ'ելլեն տօնելու փաստաբանի մը կամ կօշկակարի մը այսքան տարուայ ազգային ծառայութիւնը...

Կը յուսամ լաւ է Արուսեակը: Բարևներ և համբոյրներ մեր բոլորին կողմէն քեզ, Արուսեակին և Արփիին:

Սիրով՝ Համաստեղ

## 11.

Հոկտեմբեր 27, 1965<sup>67</sup>

Սիրելի Խաչման,

Վալատեանը ինձ մանրամասնութիւններ տուաւ ձեր ժողովէն և յետոյ Մինաս Թէօլէօլեանը<sup>68</sup>, երբ հեռախօսեցի, որ Արամ Հայկազը իր կաշեպանակը մոռցած է «Հայրենիք»ին մէջ: Երկու շաբաթէն պիտի բերէր: Կը յուսամ՝ ստացաւ: Ինչպէս կ'երևի, շատ աւելի լրջացած է խնդիրը<sup>69</sup>, քան կ'ակնկալէի: Չգիտեմ՝ ինչքան արժանի եմ այդ բոլորին: Ես արդէն ինքզինքս վերցուցած եմ մէջտեղէ և եղածը առած եմ առհասարակ հայ գրականութեան և կամ հայ գրողի հանդէպ եղած գնահատանք: Մենք՝ դաշնակցականներս, առհասարակ յրելեաններու մէջ շատ

64 Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս (1963–1983) Խորէն Ա Բարոյան

65 Այս և հաջորդ նամակներում հիշատակվող հանդեսները «Հայրենիք»ի անգլերեն հավելվածներն են՝ „The Armenian Review“, (հրատարակվել է Բոստոնում, 1948 թվականից, խմբագիրներ՝ Ռ. Դարբինյան, Ջեյմս Սանդայան) և „The Armenian Weekly“, (հետագայում՝ Monthly, հրատարակվում է Բոստոնում, 1934 թվականից, խմբագիրներ՝ Արմեն Պարտիջյան, Ջեյմս Սանդայան): Համաստեղը հաճախ այդ հանդեսների անվանումները լրիվ չի գրում:

66 Վահան Թոթովենցի (1889–1938) պատմվածքների անգլերեն ժողովածու չի հրատարակվել: Վ. Թոթովենցի «Կյանքը հին հռոմեական ճանապարհի վրա» ինքնակենսագրական վիպակը անգլերեն թարգմանությամբ լույս է տեսել 1962 թ., Նյու Յորքում, Օքսֆորդի համալսարանի հրատարակչությունից՝ „Scenes from an Armenian Childhood“, («Դրվագներ մի հայկական երեխայությունից») խորագրով:

67 Տպագրվում է ըստ բնագրի, ԳԱԹ, ՀԽՖ, N 419:

68 ՀՅԴ նշանավոր գործիչ, գրականագետ Մինաս Թեղլեոյան (1913–1997):

69 Խոսքը Համաստեղի ծննդյան 70 և գրական գործունեության 50-ամյա հոբելյանի մասին է:

ժլատ եղած ենք: Այս մէկը պատճառ թող ըլլայ, որ մոռցուի այդ ասանդական ժլատութիւնը: Քալիֆոռնիոյ համար մի քանի անուններ տրուեցան, լաւ է, որ այդ անուններուն մէջ ըլլան տէր և տիկին Փիլոյեանները: Իմացեր են, որ շատ համակիր են նման ձեռնարկի մը. կը սիրեն գրականութիւնը: Տրդատը ատենօք ինձ գրած էր Փիլոյեանին մասին, որ կ'ուզեն իրենց մասնակցութիւնը բերել, եթէ նախաձեռնութիւն մը ըլլայ. խարբերոցի են: Քիչ առաջ ինձ հեռախօսեց Անդրանիկ Անդրէասեանը<sup>70</sup> խմբագիրը «Պայքար» եռամսեայ գրականին և ուզեց ունենալ իմ լուսանկարը, որ 70-ամեակի առիթով յիշատակուի իր գրական թերթին մէջ<sup>71</sup>: Ըսի, որ աշխատանք կը կատարուի այդ մասին և կրնայ ըլլալ, որ ձեզի ալ դիմում ըլլայ՝ ձեռնարկին ոչ կուսակցական բնոյթ տուած ըլլալու համար:

Այս նամակին հետ կը դրկեմ երկու նոր և մէկ հին լուսանկարներ: Մէկ լուսանկարին ետևը գրուած է իմ կենսագրականը: Իմացայ, որ որոշուած է գրքոյկ մըն ալ հրատարակել թէ՛ հայերէն և թէ՛ անգլերէն<sup>72</sup>: Գրէ՛ ինձ, եթէ որևէ ձևով կրնամ օգտակար ըլլալ: Որքան որ կը յիշեմ, կարելի է տալ ցանկը, որոնք զբաղուած են իմ գրականութիւնով: Արամ Հայկազի պատրաստածին մէջ, որ ցոյց տուիր ինձ, կարելի է ըսել **ուստա**, աւելի ձիշդ՝ **վարպետ Յովհաննէս** և վարը աւելցնելով ծանօթագրութեամբ. «Գիւղին մէջ յարգուած սափրիչ-վիրաբոյժ»<sup>73</sup>: Կարելի է մօրս<sup>74</sup> համար ըսել. «Գուհար խաթուն», կ'ըսեմ այս, որ «աղան» չի գործածուի: Մէկ-երկու շաբաթէն կը դրկեմ նաև հօրս և մօրս նկարներում քրթերը<sup>75</sup> և կամ գիւղի մէջ հանուած ընտանիքին լուսանկարը իմ 18 տարեկանիս:

Լաւ է, որ յառաջիկայ տարուայ մայիսին ձգուած է: Բաւական ժամանակ կայ՝ լաւ բան մը ընելու: Շատ սիրալիր բարևներ մերիններէն քեզ, Արուսեակին և Արփիին:

Սիրով՝ Համաստեղ

70 Գրող, խմբագիր, ՌԿԿ գործիչ Անդրանիկ Անդրեասյան (1909-1996):

71 Համաստեղի հորեյանի մասին հայտարարութիւնը հրատարակվել է «Պայքար»-ի 1965 թ. 3-րդ համարում:

72 Խոսքը Համաստեղի հորեյանական գրքի՝ «Համաստեղ. 1895-1966» հուշամատյանի մասին է: Գրքում անգլերէն ոչ մի բառ չկա:

73 Կելենյան տոհմի մասին հետաքրքիր և մանրամասն տեղեկություններ գտանք Լորիկ Համաստեղի՝ մեզ ուղարկած «Բարջանձ գիւղը. համայնապատում 1600-1938» (Բոստոն, 1938 թ.) գրքում: Գրողի հայրը՝ սափրիչ և հեքիմ Օվանեսը (1873-1935) գյուղի նշանավոր սափրիչ Ավագի աշակերտներից էր: «Հայաստանի լեռներուն սրնգահարը» պիեսի հերոսներից Գրիգորը դժգոհում է ամերիկացի բժիշկներից. «Խրիսձի\*՝ Նիկողոսը կամ սափրիչ Օհանը էս տեղի տոքթորները ծովը կտանենի, ծարավ կբերենի» (Համաստեղ, «Հայաստանի լեռների սրնգահարը», Եր.. 1989, էջ 676):

\* Բեկաբոյժ

74 «Բարջանձ գիւղը. համայնապատում 1600-1938» գրքում՝ 74-րդ էջում, տեղեկություն կա, որ Համաստեղի մայրը՝ տիկին Գոհարը (Սահակյան, 1878-1947) Մեծ եղեռնի ժամանակ կորցրել է երկու զավակների՝ Ասատուրի և Աղավնիի, մյուս զավակների՝ Ստեփանի և Եղիազարի հետ հասել է Ամերիկա: Գրքի հաջորդ էջում տեղադրված է Կելենյան ընտանիքի խմբանկարը՝ ծնողները, երեք որդիները՝ Համաստեղ, Ստեփան, Եղիազար, նկարի վերևի անկյուններում՝ Ասատուրի և Աղավնու փոքրիկ լուսանկարները: Ընտանիքի հետ լուսանկարվել է նաև նրանց որդեգիր Պողոս Սահակյանը, որի մասին տեղեկություններ չգտանք:

75 Կտրվածք (անգլ.):

Նոյեմբեր 11, 1965<sup>76</sup>

Սիրելի Խաչման,

Պատրաստուած յայտարարութեան<sup>77</sup> մէջ մէկ-երկու փոփոխութիւններ ըրի: Եղածը լաւ էր: Արդէն կը ներփակեմ այս նամակով: Այսօր ստացայ նաև ցանկը անուններուն<sup>78</sup>, մի քանի անուններ կան, որ գուցէ չգիտեն, թէ ո՞վ է Համաստեղը: Ինչպէս Թօլեկեան, Վարանդեան: Չաքմաքճեանը շատ է հեռացեր, արդէն աչքերը չեն տեսներ: Որևէ ձևով օգտակար չի կրնար ըլլալ: Կարելի է աւելացնել որպէս անուն:

Այդ ցանկին մէջ Օզանեանը<sup>79</sup> չկար: Կար տիկին Թէօլեօլեանին անունը, բայց ոչ Մինաս Թէօլեօլեանին, նաև տօքթօր Խաթանասեանին<sup>80</sup>: Կ'ուզէի աւելցնել Սիտալին<sup>81</sup> անունը Քալիֆոռնիայէն: Աւելցնել՝ երաժշտագէտ Ռուբէն Գրիգորեան: Կարելի է նկատի ունենալ Անդրանիկ Անդրէասեանը: Վերջերս ինձմէ՛ նկարս ուզեց՝ իրենց գրական թերթին մէջ գործածելու համար: Տէյթօրոյթի շրջանէն մէկը չկայ, ինչպէս Քամառ, Բաբախանեան քահանան և գուցէ ուրիշներ: Լաւ է, որ ցանկին մէջ ունենանք «Կոչնակ»ի գործավար և հատընտիրներու հեղինակ Յովհաննէս Ըլտէտեանը (առանձինն համակրանքով կապուած է իմ գրականութեան): Լաւ է, որ ունենանք անունը նաև Տրդատ Գագանճեանին<sup>82</sup>: Ան երկու տարի է, որ նման բան մը կը մտածէ, շատ կարևոր է ցանկին մէջ դնել: Քիչ առաջ Սրբուհին թելադրեց այժմու «Պայքար»ի խմբագիր Նուպար Պէրալեան, որ գրականութիւնը անկախաբար գնահատողներէն է: Այս մէկը քեզ կը ձգեմ: Փրօֆէսօր Էթմէքճեան չգտայ թէլէֆոնի գրքին մէջ: Երէկ ստացայ նամակ մը Բենիամին Նուրիկեանէն<sup>83</sup>: Կարդացեր է «Նոր աշխարհ»ի<sup>84</sup> մէջ իմ 70-ամեակը և լաւ նամակ մը գրած է և կ'ուզէ արտայայտուիլ այդ մասին և ուզած է ինձմէ՛ կարճ կենսագրական մը: Պիտի գրեմ, որ արդէն պիտի դիմուի քեզ: Կը հաւատամ, որ ընդհանուր համակրական բան մը պիտի ըլլայ դաշնակցական գրողի մը հանդէպ: Գէթ գրական գետնի վրայ սկսուի հասկացողութիւն մը: Գրած էի, որ բարդ աշխատանք է իմ գործերուն անգլիերէն թարգմանուածներուն վրայ աշխատանք ընել, և որովհետև տեղական գոյնը շատ է զօրաւոր, թարգմանութիւնները չպիտի կրնան արդարացնել: Թարգ-

76 Տպագրվում է ըստ բնագրի, ԳԱԹ, ՀԽՖ, N 419:

77 Համաստեղի հոբելյանի մասին հայտարարությունը՝ Հակոբ Խաչմանյանի և Արամ Հայկազի ստորագրությամբ, հրատարակվել է Սփյուռքի գրեթե բոլոր թերթերում:

78 Համաստեղի հոբելյանական կենտրոնական հանձնախմբի ցանկը հրապարակված է «Յուշամատեն»-ի 8-9-րդ էջերում: Այդ ցանկով նաև պաշտոնական թղթեր են տպագրվել, որոնք օգտագործում էր Հակոբ Խաչմանյանը: Այդ թղթի վրա առաջին նամակը թվագրված է՝ 28 նոյեմբեր 1965 թ.:

79 ՀՅԴ նշանավոր գործիչ, խմբագիր Մերուժան Օզանյան (1885-1965):

80 ՀՅԴ Բյուրոյի անդամ, բժիշկ Երվանդ Խաթանասյան (1893-1989):

81 Բանաստեղծ, կոմունիստ Կարապետ Սիտալ (Շահինյան, 1891-1972): Համաստեղի գրադարանում պահվում են Կ. Սիտալի 9 գրքերը՝ հեղինակի ընծայագրերով: 1962 թ. հունվարի 11-ին Խորհրդային Հայաստանից նոր վերադարձած Սիտալը գրում է Համաստեղին. «Մտադրականների շրջանակում քո մասին մեծ հետաքրքրություն կայ: Քո մասին առաջին հետաքրքրուողը Վեհափառ Հայրապետը եղա: Ես նրան հաղորդեցի, որ դու չես մոռացել նրա բարեհաճ հրաւերը, և թէ՛ դու մտադիր ես իրագործել այն ամենայն երախտագիտութեամբ: ...Թէ՛ դու մեծ ոգևորութեամբ ես հետևում մեր երկրի մշակութային վերելքին: Թէ՛ ուսումնասիրական գրականությունն ու գրքերը մեծապէս տպաւորել են քեզ»:

82 ՀՅԴ նշանավոր գործիչ Տրդատ Գագանճյան (Էջմիածնեցի, 1892-1966):

83 Գրող, խմբագիր Բենիամին Նուրիկյան (1894-1988): «Նամականի»-ում հրատարակել ենք Համաստեղի նամակները Բ. Նուրիկյանին, ԳԱԹ-ում պահվում են Բ. Նուրիկյանի նամակները Համաստեղին և Հակոբ Խաչմանյանին:

«Յուշամատեն»-ի 16-րդ էջում հրատարակված է Բ. Նուրիկյանի խոսքը Համաստեղի մասին:

84 Ազգային-եկեղեցական, գրական «Նոր աշխարհ» շաբաթաթերթը լույս է տեսել Նյու Յորքում, 1955 թվականից: Խմբագրապետ՝ Ավետիս Թումանյան:

մանուածները բաւական շատ են հատորի մը համար: Օր մը կ'երթամ «Հայրենիք»՝ Weekly և Armenian Review այդ կտորները գատելու: Այս նամակի միջոցով կը դրկեն Արամ Հայկազին պատրաստածը: Ինչպէս ըսի, երկու պզտիկ փոփոխութիւն ըրի՝ հիւմորի չափը պահելու համար: Կը դրկեն նաև ցանկը: Ուրեմն կրնաք նկատի ունենալ նաև իմ յիշած անունները: Եթէ կ'ուզէք, Թափառական<sup>85</sup> մըն ալ կայ: Այս ալ Սրբուհուն թելադրութիւնն է: **Եւ որովհետև Հայաստանի մէջ լաւ տրամադրութիւններ կան իմ գրականութեան հանդէպ**, կարելի է նկատի ունենալ նաև «Լրաբար»<sup>86</sup> ունէ մէկը: Նորէն ձեր դատողութեան կը ձգեմ:

Կը յուսամ՝ լաւ բան մը կ'ըլլայ, սիրելի Խաչման, շնորհիւ քու այդքան լաւ աշխատանքներուդ:

Սիրալիք բարևներ Արուսեակին, Արփիին մեր բոլորին կողմէն:

Սիրով՝ Համաստեղ

**3.4.** Ըիշդ հիմա միտքս ինկաւ: Մելիտինեցին<sup>87</sup> աւելցնելու համար ցանկին վրայ – Գէորգ Թօփալեան: Կարելի է ըսել, որ լաւ է Սրբուհին: Լաւ կ'ըսենք, երբ փոփոխութիւն չըլլայ:

### 13.

Նոյեմբեր 19, 1965 <sup>88</sup>

Սիրելի Խաչման,

Ես ինքս ալ համաձայն չեմ «Լրաբեր»ի Մարտենցը ցանկի մէջ դնելու, բայց կարելի էր Սիտալը ու Սանսիվալը<sup>89</sup> նկատի ունենալ **որոնք գիտեն գնահատել գեղարուեստական գրականութիւնը**: Գրած չէիր, թէ տակաւին ի՞նչ «սովորական կասկածներ կրողներ» կան Հայաստանէն: Կ'երևի այդ կասկածը իմ դաշնակցական ըլլալու հանգամանքն է: **Ես միայն կ'արգահատեմ անոնց, երբ նման մտածումներ ունին: Իմ մտածումն և գաղափարականութիւնը ունէ պայմաններու մէջ չեմ գիշիր**: Իմ այնտեղ գրած նամակներուն մէջ միշտ ալ շեշտած եմ, որ պէտք է վերջանան այդ նախապաշարումները: Մծտ երկու շաբաթ առաջ ուզեցին զիս տեսնել սովետական Մշակութային կապի ամերիկեան թուրիստներէն երկու հայեր, մէկը՝ Ռուբէն Գրիգորեան, իսկ միւսը՝ Ստեփան Վարդանեան<sup>90</sup>, 30-ը անց երիտասարդ՝ նոյնքան համակրելի և սակայն **դաշնակցութեան հանդէպ նախապաշարումներով լեցուն**: Իր մանկութիւնէ ունեցած դատարկութիւնն է: Մեր տան մէջ էին, և քիչ մըն ալ զարմացայ, երբ ուզեց ստուգել իմ դաշնակցական

85 Բանաստեղծ Ս. Թափառական (Սարգիս Աթայան, 1895-1969): «Թափառական» ծածկանունով ստորագրում էր նաև Գևորգ Հալաջյանը (1885-1966), որի «Դէպի կախաղան» բանտային հուշագրությունը (Բոստոն, 1932 թ.)՝ հեղինակի մակագրությամբ, գտնվում է Համաստեղի անձնական գրադարանում (գրողի գրադարանի հայերեն գրքերի զգալի մասը տեղափոխվել է Երևան և պահվում է ԳԱԹ-ում):

86 Ամերիկահայ առաջադիմական միության հրատարակչություն «Լրաբեր» թերթը Նյու Յորքում լույս է տեսել 1939-1978 թթ., 1979-ից հրատարակվում է Լոս Անջելեսում: Խմբագիրներից էին՝ Պատրիկ Սելյանը, Մ. Մարտենցը (Մարտիկ Մարտիրոսյան), Վահան Ղազարյանը:

87 Գրող, հասարակական գործիչ Գևորգ Մելիտինեցին (Թոփայան, 1898-1986) 1966 թ. հիմնել է իր անունով գրական մրցանակ, որ գործում է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության կառույցում:

88 Տպագրվում է ըստ բնագրի, ԳԱԹ, ՀԽՖ, N 419:

89 Գրող Սանսիվաս (Հովսեփ Տեր-Ստեփանյան, 1896-1978):

90 1964 թ. ՀԿԿ ԿԿ-ի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ Ստեփան Վարդանյան:

ըլլալը: Ըսի, որ դուք չէիք ծնած երբ ես դաշնակցական եղած եմ, որ եթէ մի քանի օր մնայիք իմ մօտ, քեզ ալ դաշնակցական կը դարձնէի, որովհետև քու գիտակցութեան մէջ դաշնակցականը կայ: Համակրելի հայ երիտասարդ մըն էր, կարդացած էր իմ գրականութիւնը և կը պատմէր իր ընկերոջ՝ սուր յիշողութիւններով: Կրնայ Հայաստան վերադարձին այդ «սովորական կասկածներուն» վրայ բան մը աւելցնել<sup>91</sup>: Ես այդ կասկածները չեմ կրնար ըմբռնել, որովհետև թերութիւնը իրենց մէջ է և հիւանդագին: Մեզի համար էականը Հայաստանն է, հայ ժողովուրդը, և ես այդ մասին խօսեցայ այդ երկուքին... Մանտալեանին և Թաշճեանին եթէ յանձնախումբի կողմէ այդ նամակը դրկուէր, աւելի լաւ կ'ըլլար, և մանաւանդ պէտք է գիտնան, որ նաև Կ. Կօմիտէի նախաձեռնութիւն է և կայ Պիւրօն: Այդ պարագային՝ կրնան ընթացք տալ: Այս ձևով չեմ կարծեր, որ կարևորութիւն տան: Նախ Թաշճեան չգիտէր Համաստեղի գրականութիւնը, իսկ Մանտալեան ինքնահաւան բան մը ունի՝ հակառակ անոր, որ ինձմէ բաւական թարգմանութիւններ ըրած է: Ըսել կ'ուզեմ, այդ երկուքը կրնան բանի մը ընթաց տալ, եթէ յանձնախումբի միջոցով Կ. Կօմիտէի թելադրութիւնները ըլլան: Անոնք լաւ աշխատանք կրնան ընել, եթէ Weekly և Reviewի մէջ հրատարակածները իրարու մօտ բերեն և նիւթ դարձնեն ամերիկեան մամուլին:

Շատ սիրով՝ Համաստեղ

#### 14.

Յունուար 13, 1966<sup>92</sup>

Սիրելի Խաչման,

Բայց ինչո՞ւ այս աճապարանքը, մանաւանդ՝ Նիւ Եորքի երթևեկի աննպաստ պայմաններուն մէջ: Տակաւին բաւական ժամանակ կայ: Ինչպէս կ'երևի, մեր կողմէ գաղութի ուշադրութիւնը, Պիւրոյի հանգանակութիւնը եկեղեցիին Առաջնորդարանի հանգանակութիւնով պիտի կլանուի: Դեռ որևէ աշխատանք ըրած չունին: Ըսել կ'ուզեմ՝ այդ պայմաններուն մէջ դժուար է ժողովուրդ մը գրականութեան շուրջ հաւաքել, յիշատակութիւն մը ընել: Անհատներուն դրկուելիքը նամակը լաւ կազմուած է, մինակ թէ օրուայ թերթերուն դրկուելիքը նեղ շրջանակի մէջ դրուած է ըսել կ'ուզեմ: Համազգային ըլլալու շունչը կը պակսէր: Յանձնախումբը կու գայ յոբելեանը ներկայացնելու գէթ մի քանի տողերով: Համաստեղի յոբելեան ըլլալէ աւելի գրականութեան արժէքն է, որ մէջտեղ պիտի բերուի: Համաստեղը առիթ է միայն, եթէ կ'ուզուի համազգային բնոյթ տալ: Եւ յետոյ անհրաժեշտ է՝ թերթերուն համար Համաստեղը ներկայացուի քիչ մը՝ յոբելեանի վաւերականութիւնը ստանալու համար: Ծանօթ են մտաւորականները: Մեզի համար ժողովուրդն է անհրաժեշտը...

Շատ բարևներ ու համբոյրներ մերիններէն:

Սիրով՝ Համաստեղ

91 Համաստեղը չէր սխալվում: Հայաստան վերադառնալուց հետո Ստ. Վարդանյանը «Մովետական գրականություն» ամսագրում (1966, N 4) տպագրեց «Ամերիկյան մթնում է» հոդվածը, որտեղ վառ կերպով դրսևորվեցին հեղինակի «նախապաշարումները»: Իր «տպավորությունները» գրքով հրատարակելուց («Ամերիկյան մթնում է: Հանդիպումներ, տպավորություններ», Եր., 1966 թ.) շատ տարիներ անց նա «Գարուն» հանդեսի 2000 թ. 4-րդ համարում տպագրեց հոդված՝ «Երեք ժամ Համաստեղի տանը» վերնագրով: Անցած տարիները ոչինչ չէին փոխել կոմունիստի աշխարհայացքում, և ստիպված եղանք նույն հանդեսի՝ 2001 թ. 6-րդ համարում տպագրել «Օ՛, ժամանակներ...» վերնագրով պատասխան հոդված: «Բագին» հանդեսի՝ 2001 թ. 1-ին համարում տպագրված է «Թուրքմենական շիթը...» հոդվածը, որտեղ անդրադարձ կա Ստ. Վարդանյանի այս «հուշագրությանը»:

92 Տպագրվում է ըստ բնագրի, ԳԱԹ, ՀԽՖ, N 420:

Յունուար 23, 1966<sup>93</sup>

Միրելի՛ Համաստեղ,

ԱՐՆԻՎ

Հակառակ որ կարճ է ժամանակս – քիչ վերջ՝ քանի մը ուսանողներ պիտի գան, թերևս 3-4 ժամով – կ'ուզեմ օգտագործել այս պատեհությունը՝ ուշադրություն տալով յանձնելու քանի մը կէտեր, առանց կարգի:

Միսալ է կարծել, թէ բաւական ժամանակ ունինք: Ո՛չ, ուշ իսկ ենք. պատճառները շատ են, և չ'արժէր թուել:

Կրնան ուրիշ քանի ձեռնարկներ կենալ միառժամանակ: Թող կենան: Ամէնքը իրենց տեղը, Համաստեղը Իր տեղը: Պէտք չէ մոռնալ նաև, որ այս շարժումը Ամերիկայինը չէ՛ միայն: Բոլորինն է. համահայկական է: Գոնէ ինձ համար, սկիզբէն իսկ բարոյական ձախողանք է այլ կերպ մտածել: Այդ պէտք է ըլլայ ոչ միայն մեր ջանքը, այլ՝ նպատակն ու ձգտումը՝ Համաստեղը բոլոր սիրողներուն:

Շեշտեմ. Համաստեղի իրական գնահատողները պզտիկցուցած պիտի ըլլան Համաստեղը, եթէ չընեն իրենց կարելին, որ անոր յորելեանը տօնով՝ հայաշխարհի ամէն մեծ կեդրոն, ամէն փոքր անկիւն – ատոր համար աշխատելով և՛ տեղին վրայ և՛ հեռուներէն, պաշտօնապէս թէ անձնապէս:

Ասոր նպաստելու պիտի հրաւիրուին ամենէն առաջ Համաստեղի գրչեղբայրները ու յարմար շատեր: Ասոնց մէջ պէտք է ըլլան գրողներ, որ Համաստեղի գրականութեան բացառապէս **հայկական** ոգին – տեղական իր բնոյթէն անկախօրէն – շեշտեն, թէ այնքան ալ **մարդկային է**: Եւ ատոր համար ալ հայն ամէն տեղ համահաւաք հանդիսութեամբ պէտք է արտայայտէ իր գնահատությունը, սէրն ու հպարտությունը իր արժանաւոր յորելեարին հանդէպ:

Գրած եմ ուրիշ ատեն ալ. Արամը ինքնաբերաբար կ'ընէ իր կրցածը. երբեմն՝ աւելին անգամ: Անտարակոյս, ասկէ ետք Եղուարդն<sup>94</sup> ալ պիտի ընէ՝ իրմէ խնդրուածը:

Լաւ չհասկցայ, թէ ինչ կը մտածես ընել քեզ դրկուած կարգ մը նամակներու մասին: Ամէն պարագայի, պատրաստե՛ք ընելիքդ: Մինասը<sup>95</sup> անձկոտ է մէկ օր հող գալու և բացատրելու, թէ ինչ պիտի ըլլայ իր պատրաստելիք գիրքը<sup>96</sup>: Արդէն կազմած է 10 կամ աւելի էջեր՝ **իբր նմուշ**: Կ'ուզէ, որ դուն ալ ունենաս յստակ գաղափար մը: Իր այս պատրաստածը ես ալ չեմ տեսած, բայց գիտեմ:

Յանձնախումբի անունով բոլոր թերթերուն պիտի դրկուի նոյն բանը: Եւ պիտի ըլլայ ամէն ջանք, որ բոլոր թերթերն ալ – մօտ ու հեռուն – իրենց դրկուածն ստանան **միառժամանակ**:

Շատ կը ցախիմ, որ չկրցանք գտնել Ուիլիամ Սարոյեանը<sup>97</sup>: Ըսուեցաւ, որ Փարիզ է: Հոն հայերու մէջ կատարուած դիմումներ չտուին արդիւնք մինչև 2-3 օր առաջ: Այսօր պիտի գրեմ Արամ Սարոյեանին<sup>98</sup>: Տեսնենք, թէ կրնամք ձեռով մը օգտակար ըլլալ: Եթէ քանի մը օր ևս չգտնենք, պիտի չկրնանք իրեն հասցնել մեր **բուն խնդրանքը**:

93 Տպագրվում է ըստ բնագրի, ԳԱԹ, ՀՖ, N 124:

94 ՀՅԴ գործիչ, խմբագիր Էդուարդ Սահակյան (1899-1981): Նա Համաստեղի հրեյանական կենտրոնական հանձնախմբի գանձապահն էր:

95 Նկարիչ, «Յուշամատեն»-ը և Արամ Հայկազի հրեյանական 2 գրքույկները ձևավորող Մինաս Մինասյան (1907-1981):

96 Տե՛ս 5-րդ նամակի 2-րդ ծանոթագրությունը:

97 Աշխարհահռչակ գրող Ուիլյամ Սարոյան (1908-1981):

98 Արամ Սարոյանը Ուիլյամ Սարոյանի որդին է:

Թ. (ԺԵ) Գրարի, թիվ 2 (58), ամբիլ-հունիս, 2017

ՎԷՎ համահայկական հանդես

16.

Յունուար 27, 1966<sup>99</sup>

Միրելի՛ Խաշման,

Ստացայ յունուար 23ի նամակդ: Թէ որքա՛ն պիտ յաջողինք համագգային դարձնել, չգիտեմ: **Բայց որ լաւ փորձ մը կարելի է ընել յանուն գրականութեան:** Գրած էի, որ ես համաձայն եմ Սանսիվասը և Միտալը նկատի ունենալ: Կը հաւատամ, որ պիտի բերեն իրենց մասնակցութիւնը: **Կը տեսնեմ, որ գէթ ինձ հանդէպ սա հակադաշնակցականները աւելի ներողամիտ են:** Այս նամակով կը դրկեմ իմ պատրաստելիքը՝ նամակներու ձէնձէլ<sup>100</sup> աշխատանքէն դուրս գալու համար: Որպէս նմոյշ՝ կարելի է հրատարակել Աւետիս Ահարոնեանի նամակը<sup>101</sup>: Ունիմ բազմաթիւ նամակներ, որ առաւելապէս իմ գրականութեան մասին կը խօսին: Ատոնք մէջտեղ բերել կը նկատեմ աժան ցուցադրութիւն: Այդ ցուցադրութիւնէ մասամբ դուրս գալու համար կարելի է տալ, ինչպէս ըսի, Ահարոնեանը: Ինչ կը մտածես իմ ներփակ պատրաստածին մասին: Կարծեմ գէշ չէ: Լաւ պիտի ըլլար Սարոյեանը, որովհետև բարեկամներ ենք, թէև երկարատեւ տեսած չենք զիրար: Պէտք կ'այ Միհասիին այստեղ գալ: Վստահ եմ, որ լաւ ճաշակ ունի: Կրնա՞ք իր պատրաստածէն օրինակ մը ինձ դրկել: Միհակ թէ ծայրայեղութիւններ չըլլան և չափը պահուի: Ուրեմն շատ ալ յարմար չի նկատեցիր իմ պատրաստածը մամուլին առաջին յայտարարութեան համար: Միհակ թէ եղածը քեզ պահէ: Ըսել կ'ուզեմ՝ չեմ ուզեր գիտնան, որ ես այդ տեսակ բան մը պատրաստած եմ, նոյնիսկ յանձնախումբի անդամները: Այդ միայն քեզ վստահեցայ: 1925ին Դաւիթ Անանունի գրած դրուատականի<sup>102</sup> վերջին մասերը գտայ, կը պակսի առաջին մասը: Ան ալ կրնամ լրացնել Թօփալեանի գրատունէն և դրկել քեզ:

Աշխատէ Թէօլէօլեանը չափով մը գործի լծել: Ան գիտէ գործնական աշխատանք կատարել, Կ. կօմիտէի քարտուղարի հանգամանքով ալ:

«Ռաֆֆի» օրացոյցը<sup>103</sup> ստացայ երկու օրինակ: Այսօր մի քանի տող ալ գրեցի՝

99 Տպագրվում է ըստ բնագրի, ԳԱԹ, ՀԽՖ, N 420:

100 Ձանձրալի:

101 Գրող, ՀՅԴ նշանավոր գործիչ Ավետիս Ահարոնյան (1866-1948):

Նրա նամակը տպագրված է «Յուշամատենի» 66-րդ էջում.

Միրելի՛ իմ Համաստեղ,

Հաճոյքով ու սիրով եմ կարդում գրածներդ: Հայ Հայրենիք էք տարել օտար հորիզոնների տակ և չէք թողնում, որ փոշինայ: Ապրիք. մեր ցեղի ստեղծագործական աղբիւրը անսպառ է: Հայ ոտքը ո՞ր հողը կոխի, պիտի փրթթի: Արևմտահայ գրականութիւնը Ռ. Զարդարեանից ու Թլկատիցցուց յետոյ Ձեր հայրենաշունչ, առողջ և գեղու բոյրով հարուստ արձակին պէտք ունէր: Ի սրտէ շնորհաւորում եմ. Ձեր ձամբան ուղիղ է և Ձեր արուեստը՝ կորովի:

Յետ յետ եմ նայում և Ձեզ եմ տեսնում. ինչ խորունկ սփոփանք իմ յուսացող սրտին: Շարունակեցէ՛ք այդպէս: Բոլոր սրտով Ձեզ յաջութիւն եմ մաղթում:

Ջերմօրէն Ձերո՞՛ Աւետիս Ահարոնեան

102 Դավիթ Անանունի (Տեր-Դանիելյան, 1880-1942) «Գիւղը» հոդվածը լույս է տեսել «Հանդէպ ամսօրեայ»ի՝ 1925 թ. 5-6-րդ համարում: Հոդվածը տպագրված է «Յուշամատեն»ի 59-61-րդ էջերում:

103 «Ռաֆֆի» օրացոյցը Թեհրանում հրատարակել է Տաճատ Պողոսյանը: Օրացոյցի՝ Հայաստանի ազգային գրադարանում պահվող համարներից երկուսի (1967 և 1977 թթ.) էջերում գտանք ակնարկ՝ «Բազմավաստակ գրագէտ Համաստեղի յոբելեանը Իրանում» վերնագրով և գորդի մի քառյակ.

Լանք թէ խնդանք, ձամբան նոյնն է, սիրական,

Թէ՛ անգէտին, թէ՛ բանգէտին մահը նոյնն է, սիրական,

Էս կեանքին մէջ իրական՝ երազներ են, որ միշտ կան,

Երազներէն իրական՝ մեր օրերն են, սիրական:



որպես գնահատություն իր աշխատանքին ու շնորհակալություն:

Եթե կ'ուզեն Պարսկաստանի մեջ յիշատակություն մը ընել, կրնան մտաւորականները, գրականագետները և գրասէյնները իրարու քով գալ և տօնել իմ գրական 50-ամեակը: Եթե արժանի կը նկատեն: Յաճախ կ'իմանամ, որ մանաւանդ Պարսկաստանի մեջ շատ են գնահատուած: Այսօր «Ալիք»ին մեջ տեսայ խոշոր յայտարարութիւնը, որ կը տօնեն Շիրազի 50-ամեակը՝ ի հարկէ առանց Շիրազի ներկայութեան: Նման բան մը կրնան ընել նաև Պարսկաստանի մեջ՝ առանց իմ ներկայութեան:

Սրբուհին ծանր բժշկական գործողութիւնէն յետոյ պիտի մնայ հիւանդանոց առնուազն 3 շաբաթ: Կը յուսանք՝ 3 շաբաթէն գտնէ ինքզինքը: Այդ տեսակ տրամադրութիւնով է, որ կը հետևիմ իմ յոբելեանին: Սիրտս կոտորուած է: Կը յուսամ ամէն բան լաւ է, Խաշման: Հոգ տարէք ձեր և տունի առողջութեան: Սիրալիբ արևներ Սրբուհիէն, Լորիկէն, Արմինէէն քեզ, Արուսեակին և Արփիկին:

Բարևներ Արամին և Էտիին<sup>104</sup>:

Սիրով՝ Համաստեղ

## 17.

Փետրուար 6, 1966<sup>105</sup>

Սիրելի Համաստեղ,

Երէկ և այսօր ստացայ փետրուար 2-ի և 4-ի նամակներդ: Շնորհակալ եմ: Ներողութիւն հօրդ և մօրդ նկարներու իմ շփոթումին կամ մոռացումին համար: Ատոնք յաճախ կը պատահին ինձ, մանաւանդ շտապ ու խառնակ գործերուն մէջ: 1923ին թէ 1927ին աղուոր յուսանկար մըն ալ պատահաբար իմ թղթերէն դուրս եկաւ: Այս շաբաթ լաւ է այդ բոլորը յանձնեմ Մինասին: Կը խօսիմ իրեն ու Արամին, թէ երբ կրնան անգամ մը Պոսթըն գալ: Անշուշտ լաւ կ'ըլլայ, եթէ քանի մը ուրիշներ ալ տեսնան: Բնական է՝ առաջուց կը գրեմ: Կարծեմ տեղ մը Թէօլէօլեանին ևս գրած եմ այդ մտքով:

Ատեն մը առաջ գրած եմ, թէ Փիլոյեանը պատասխանած է: Որքան գոհ եմ: Մեծ է իմ յարգանքը այդ մարդուն հանդէպ: Լաւ մարդ է: Այսօր ալ պատասխաններ առի տօքթօր Մելիկեանէ ու Քարեանէ<sup>106</sup>: Յիշեցումի համար խնդրեր էի, որ Հիւսիսեան Քարեանին խօսէր: Կ'ենթադրեմ, որ այդ յիշեցումները փութացուցին ասոնց պատասխանները: Հոգ մը պակաս: Չեն պատասխանած դեռ Զարգուն<sup>107</sup> ու Փոսթաձեանը<sup>108</sup>: Ասոնց մասին ևս գրած էի Կռանեանին<sup>109</sup>: Տեսնենք:

Պէյրութի կապակցութեամբ «Կուսակցական մարմիններ»ու խօսքն է իր անհատներէ, այո՛, բոլոր տեսակի ու գաղափարի մարդոցմէ: Յոբելեանը քաղաքական գործ չէ. գերազանցապէս մշակութային գործ է: Եւ դուն – հակառակ որ կուսակցութեան մը մէկ նուիրուած ու հաւատաւոր անդամն ես – այսօր յոբելեար ես բա-

104 Արամ Հայկազն ու Էդուարդ Սահակյանն են:

105 Տպագրվում է քստ բնագրի, ԳԱԹ, ՀՖ, N 124:

106 ՀՅԴ գործիչ, Հայ կրթական հիմնարկության հիմնադիրներից, Հայ օգնության միության եռանդուն անդամներից Հարություն (Հերրի) Քարյան (1892-1967): Նա իր գործարար ընկերների՝ Ալեք Փիլիպոսյանի և Արփաքաղ Սեդրակյանի հետ 1952 թ. Լոս Անջելեսում տպարան գնեց և հրատարակեց Ռուբեն Տեր-Մինասյանի «Հայ յեղափոխականի մը յիշատակները» գրքի 7 և Համաստեղի «Սպիտակ Զիւտորը» դրուցագնավեպի հատորները:

107 Գրող Զարեհ Զարգուն (Լևոն Ազխաչեյրյան, 1913-1996):

108 Նախկին վարդապետ, գրող, մանկավարժ Թորգոմ (Արամ) Փոսթաջյան (ծնվ. 1926 թ.):

109 Թատերական, հասարակական, կուսակցական և կրթական գործիչ, գրող, գեղանկարիչ, 1958-1981 թթ.՝ Հայ կրթական հիմնարկության վարիչ քարտուղար Բյուզանդ Կռանյան (Չեքիջյան, 1912-?):

ցառապէս՝ իբրև գրագէտ, հայոց գրագէտ, ոչ թէ գրագէտը հայութեան մէկ հատուածին կամ հոսանքին: Դուրս կը պատկանիս ամբողջական հայութեան: Դաշնակցութիւնը, մեծ ըլլայ թէ փոքր, մէկ մասն է միայն հայութեան: Սկզբունքով ունէ հայ ուրիշ ունէ հայու հաւասար իրաւունք ունի գրագէտ Համաստեղի յոբելեանին մէջ տեղ ու դեր ունենալու: Այսպիսով է միայն, որ յոբելեանը կրնայ միասնական ու համահայկական դառնալ: Ուրիշներ կրնան թերանալ այս հասկացողութեան մէջ, անոր կիրառումին մէջ, բայց ոչ մենք: Կարելի է ներել անոնց շատ թերացումներուն, բայց մենք պէտք չէ ներենք մեր թերացումներուն, մերիններուն թերացումներուն:

Կը սպասեմ լուրի մը Սարոյեանէն կամ իր մասին ունէ մէկէն, յատկապէս Ֆրեզնոյէն: Քանիներու գրած եմ:

Քարտուղարի իմ դերիս մէջ չեմ գրած Պիւրոյին: Հաւանաբար չափազանցութիւն է իմ այս զգուշաւորութիւնը, բայց լաւ է չտալ պատրուակ: Միասնականութեան առաւելագոյն իրագործումը մեզ համար մեծ արժէք է և յոբելեանի բացառիկ յարգանք ու պատիւ: Փոքր չափով իսկ չպիտի ուզէի դժուարացնել ատիկա:

Սակայն գրած եմ և պիտի շարունակեմ գրել Բարգէնին<sup>110</sup>: Յանձնախումբի այս մտքերն ու փափաքները ջանացած եմ յստակ ընել իրեն ու իրենց:

Ներկայ պայմաններուն մէջ գէթ առ այժմ շատ է անժամանակ խօսիլ ու ծրագրել քու Լիբանան երթալուն մասին: Եթէ ընեն իրենց կարելին, մանաւանդ աշխատելով կրնան յաջողիլ առանց քու ներկայութեան ալ: Բայց պէտք է աշխատին, լաւ աշխատին և բոլորը գործին լծելով աշխատին՝ ամէն պատասխանատուութիւն միասնաբար ստանձնելով:

Գրած եմ քեզ, որ այս մասին «Համագգային»ին ևս գրած եմ բաւական երկար: Գրածիս պատճէնն ալ նախապէս հաւանութեան եմ ենթարկած Արամին ու Եղուարդին:

Այսօր իսկ անդամակցութեան հրաւեր մըն ալ կը դրկեմ Պ. Ադամեանին՝ համաձայն քու թելադրութեան: Նկատի ունեցիր, որ մեր հրաւերը ընդունած են Չրաքեան ու Պոյաձեան:

Շնորհակալ եմ «Ալիք»ի կտրօններուն համար: Առայժմ կը պահեմ մօտս:

Լաւ կ'ընես, որ շուտով դրկես գիրքերուդ լրիւ շարքը<sup>111</sup> «Րաֆֆի»ին: «Անձրև»ն ալ միասին: Խնդրանք մը: Լաւ կ'ընես, որ բոլորին վրայ առաջին մէկ էջին վերև դնես **ստորագրութիւնդ**: Ես իրենց ալ գրեցի: Տղաքը գոհ պիտի մնան: Այժմէն վստահ եմ, որ ասոնք լաւ պիտի աշխատին, շատ պիտի աշխատին: Գալով փոխարժէքին՝ կրնաս դուրս ներկայացնել հաշիւը ուղղակի կամ ինձ կը դրկես, ու ես կ'ուղարկեմ:

Կարծեմ բաւական մը բան գրեցի: Կը յուսամ, որ Թէօլէօլեանն ալ հեռաձայնած է և բաներ մըն ալ ըսած կ'ըլլայ:

Այսքան բան է այժմ:

Գիշեր բարի: Վաղը կ'իրակի է: Առտուն կու տամ փոսթին:

110 Նամակը գրելու շրջանում Բարկեն Փափազյանը ՀՅԴ Բյուրոյի անդամ էր:

111 «Յուշամատեն»ի 110-րդ էջում տպագրված է Համաստեղի գրքերի ցանկը՝

ա) «Գիւղը» (Բոստոն, 1924)

բ) «Անձրևը» (Փարիզ, 1929)

գ) «Սպիտակ Ձիաւորը» (Լոս Անջելես, 1952)

դ) «Քաջ Նազար և 13 պատմութիւններ» (Կահիրե, 1955)

ե) «Աղօթարան» (Բեյրութ, 1957)

զ) «Այծետոմար և ուրիշ բանաստեղծութիւններ» (Կահիրե, 1960)

է) «Առաջին սէրը» (Բեյրութ, 1966)

ը) «Երկեր», Ա հատոր (Բեյրութ, 1966):

18.

Մարտ 11, 1966<sup>112</sup>

Սիրելի Խաչման,

Մեր սիրելի Սրբուհին մեռաւ այս հինգշաբթի գիշեր:  
Հազիւ բռնեցի ինքզինքս այս երկու տողը գրելու:

Համաստեղ

19.

Մարտ 26, 1966 <sup>113</sup>

Սիրելի Խաչման,

Երկու նամակներդ ալ ստացեր եմ: Շատ բան փոխուած չէ իմ հոգեկան կա-  
ցութիւնէն: Բարեկամներ կու գան յաճախ, և պահ մը կը հեռանամ՝ անոնց հետ  
զրոյց ընելով: Մինակութիւնս անտանելի է և արդէն Սրբուհու հետ: Անոր ձայնը  
կ'առնեմ: Կարծես սանդուղքէն վար պիտի իջնէ և կամ խոհանոցն է ու ինք չկայ:  
Դեռ գործի սկսած չեմ և սթրայքը<sup>114</sup> կը շարունակուի: Ցաւակցական հեռագիրներ  
ստացայ էջմիածնի կաթողիկոսէն, Մշակութային կապի կոմիտէի նախագահ  
Համազասպեանէն, յուզիչ խօսքերով, «Հայրենիքի ձայն»ի խմբագրութիւնէն<sup>115</sup> և  
հեռագիր մըն ալ ութը կարևոր գրողներէն, որոնց մէջ են Մահարի, Կապուտիկեան,  
Սևունց, Նորենց, Դաւթեան, Խանգաղեան և ուրիշներ: Կը տեսնեմ, որ Ամերիկայէն  
դուրս աւելի լայն հետաքրքրութիւն կայ յորելեանին շուրջ: Ինչպէս ըսի, կարևոր  
տեղերը կարելի է աշունին ձգել: Այդ կարևոր է:

Համբոյրներ իմ, Լորիկի և Արմինէի կողմէն քեզ, Արուսեակին, Արփիկին:

Սիրով՝ Համաստեղ

**3.4.** Կը մտածեմ բազմաթիւ ցաւակցական տոմսերու, հեռագիրներուն համար  
«Շնորհակալութիւն» մը տալ «Հայրենիք»ին՝ առանց անունները տալու, որովհետև  
շատ են անունները և կարևոր անուններ: Կ'ուզեմ յիշել միութիւնները միայն:

20.

Մայիս, 1966<sup>116</sup>

Սիրելի Խաչման,

Այսօր 6 օր հիւանդանոցն եմ: Գործողութիւնը երեքշաբթի առաւօտ ունեցայ:  
Առայժմ կապուած եմ անկողնին: Բժիշկը կ'ըսէ, որ ամէն բան լաւ է, և կը սպասենք,  
որ հետզհետէ մաքրուի: Լորիկն ու Արմինէն ամէն օր կու գան և այնքան վարժուած

112 Տպագրվում է ըստ բնագրի, ԳԱԹ, ՀԽՖ, N 420:  
113 Տպագրվում է ըստ բնագրի, ԳԱԹ, ՀԽՖ, N 420:  
114 Գործադուլ (անգլ.):  
115 1965 թ. օգոստոս-1967 թ. հունիս ժամանակահատվածում «Հայրենիքի ձայն»ի խմբագիրն էր  
բանաստեղծ Վահագն Դավթյանը (1922-1996):  
116 Տպագրվում է ըստ բնագրի, ԳԱԹ, ՀԽՖ, N 420:  
Թվագրում ենք ըստ բովանդակության:

Թ. (ԺԵ) Գրարի, թիվ 2 (58), ապրիլ-հունիս, 2017

ՎԿՎ համահայկական հանդես

են իրենց մօր՝ Սրբուհու օրերուն: Այժմ ես եմ և կը յուսամ յառաջիկայ երեքշաբթի տուն երթալ և երկու շաբաթ ալ տունը մնալ: Դեռ այդ երկու շաբաթը որոշ չէ, մինչև որ բժիշկը իր արտօնութիւնը տայ՝ նորէն գործի վերադառնալու համար: Առանձինն ցաւ չունիմ բայց եղածը նեղացնող է և կ'աշխատիմ ժամանակներս բանով մը լեցնել, այլապէս անտանելի է: Բաւական նամակներ գրած եմ. երկու օր է այն ձեռագրի<sup>117</sup> ընդօրինակութիւնով գրադուած եմ, որ կարենամ շուտով դրկել Պէյրութ՝ «Համազգային»ին: Գրեցի Վրացեանին, որ կրնան «Գիւղ»ը և «Անձրև»ը հրատարակել մէկ հատորով<sup>118</sup>: Կը տեսնեմ, որ արտասահմանի թերթերուն մէջ միշտ ալ բան մը կայ յօբելեանի առիթով: «Ալիք»էն իմացայ, որ Գրողներու միութիւնը Պարսկաստանի մէջ որոշած է տօնել յօբելեան, բայց թուական չկար: «Նայիրի»ն<sup>119</sup> շատ անհամ միջամտութիւն մը ըրած է Վրացեանի յօբելեանի մասին ունեցած լաւ տրամադրութիւններուն: «Նայիրի»ն հետզհետէ աւելի կը փսնանայ<sup>120</sup>: Հայաստանէն Անդրանիկի մասին յօդուած մը դրած էր, ուր Անդրանիկի բերանով Դրօս թալանձի կոչուած էր: Այդ խմբագիրը վատը լաւէն զատելու չափ պէտք էր խելք ունենար, մանաւանդ որ ինքը ատենօք դաշնակցական եղած է: Այդ տղուն այդքան լղարիկ ըլլալը չգիտէի:

Ներքին կը դրկեն:

Ջարմանալի բարի մէկն է Տարօնեանը<sup>121</sup>. ուրիշ անգամ ալ դրկած էր ինձ նման տողեր: Շատ մեղք, որ խեղճը աչքերը կորսնցուցած է: Իմ քով կը կորսուին, դուն աւելի լաւ կրնաս պահել:

«Արև»ի<sup>122</sup> հասցէն տակաւին չի դրկեցիր:

Շատ բարեններ Արուսեակին, Արփիկին համբոյրներ Լորիկէն և Արմինէէն: Հաճոյքով կարդացեր են իրենց գրած նամակը:

Սիրով՝ Համաստեղ

## 21.

Յուլիս 7, 1966<sup>123</sup>

Սիրելի Խաչման,

Ճիշդ երկու ժամ առաջ տուն եկայ: Առայժմ հանգիստ եմ և կը յուսամ՝ ապա-քիսումի ճամբուն վրայ: Առնուագն 6 շաբաթ դուրս չպիտի մնամ: Տեսնենք՝ ինչպէս կը դասաւորուի: Հետզհետէ կը համոզուիմ, որ պէտք է դադարիլ աշխատանքն: Տեսնենք: Օրական պէտք է գործածեմ<sup>124</sup>: Գէշ չեմ զգար, առայժմ ամէն ինչ հանդարտ է: Միակ բանը, որ մօտ 16 փառնտ<sup>125</sup> պակասած եմ: Ախորժակը հետզհետէ կու գայ կարծես: Բժիշկները այդ մասին մտահոգուած չեն: Ըսած չէիր, թէ ինչ են քու ունեցած մանր-մունրներդ: Միայն աշխատէ՛ չի տկարացնես դու քեզ այդ մանր-մունրներով: Ես գիտեմ, որ բժշկական գործողութիւնը փութացուց իմ սրտի տկարութիւնը: Գիտեմ, որ դուն քեզ հոգ կը տանիս: Նայէ՛, որ եղած աշխատանքները

117 Խոսքը Համաստեղի «Առաջին սէրը» վիպակի մասին է:

118 Համաստեղի Երկերի Ա հատորը լոյս է տեսել Բեյրութում, 1966 թ.:

119 «Նայիրի» պարբերականը լոյս է տեսել 1941 թ. նոյեմբերից մինչև 1983 թ. մարտը, 1941-1951 թթ.՝ Հայկալում, այնուհետև՝ Բեյրութում (իբրև շաբաթաթերթ՝ 1952 թ. օգոստոսի 31-ից): Հիմնադիր-խմբագիր՝ գրող Անդրանիկ Ծառուկյան (1913-1989): Նույն պարբերականի արտոնագիրը գնելով՝ այն իբրև պարբերաթերթ լոյս ընծայեց Ժիրայր Նայիրին (Թոսունյան, 1929-2013) Բեյրութում՝ 1996-2013 թթ.:

120 Վատանալ, փչանալ:

121 Արձակագիր, մանկավարժ Եղուարդ Տարոնյան (1896-1967):

122 ՌԿԿ օրգան «Արև» թերթը Եգիպտոսում լոյս է տեսնում 1915 թվականից:

123 Տպագրվում է ըստ բնագրի, ԳԱԹ, ՀԽՖ, համար 418:

124 Խոսքն ամեն օր դեղեր գործածելու մասին է:

125 Ֆունտ (անգլ.), հավասար է 455 գրամի:

չի ծանրացնեն քեզ: Ինչ ալ ըլլայ, լաւ բան մը կ'ըլլայ Ամերիկայի մէջ: Կը յուսամ լաւ կ'ըլլան և կը հասնին: Արամ Հայկազին ըսէ, որ իր գործողութեան բժիշկը լաւ ընտրութիւն ըլլայ: Իմ բացառապէս երկար տևեց և կարծես հետզհետէ կ'անցնի:

Իշավարի բան մըն էր «Սովետական գրականութեան» մէջ եղածը<sup>126</sup>: Ես խօսած էի քեզ այդ երկու հիւրերու մասին. բարեկամօրէն ընդունեցինք և բարեկամօրէն բաժնուեցանք: Ահա թէ ինչքան խաթարուած են նկարագիրները: «Յուսաբեր»ը չպէտք էր արտատպէր<sup>127</sup>: Զիս դրած է փոքրիկ խրճիթի մը մէջ՝ մաշած կարասիներով և էժանագին գորգերով: Չհասկցայ, թէ ինչո՞ւ այդքան խեղճացուցած է, և թրքական օդին<sup>128</sup>... Եւ այդ տեսակ ապուշներու հետ է, որ պիտի խօսինք, երբ օր մը Հայաստան երթամ: Երէկ Թէօլէօլեանը եկած էր հիւանդանոց: Քեզի պիտի գրէր: Այս անգամ այնպէս տպաւորուեցայ, որ ինք երբեք մտահոգուած չէ այս յոբելեանի խնդիրով (խօսքը մէջերնիս): Չգիտեմ՝ բան մը ըրած է Պատգամաւորական ժողովին մէջ: Այդ մասին բան մը չըսաւ: Կը յուսամ՝ Արամի գործողութիւնը լաւ կ'անցնի: Իմ կողմէն բարևէ: Մեր սիրալիբ բարևները Արուսեակին, Արփիկին: Արմինէին կողմէն համբոյրներ: Լորիկը տակաւին չեկաւ Քալիֆոռնիայէն: Գուցէ գայ շաբաթ օր:

Սիրով՝ Համաստեղ

22.

Նոյեմբեր 21, 1966<sup>129</sup>

Սիրելի Խաշման,

Կը յուսամ՝ հանգիստ հասաք Նիւ Եորք մեր սիրելի Արամին հետ: Երկու օրուայ ընթացքին Արամին աւելի լաւ ճանչցայ: Երբեք առիթ եղած չէր այդքան միասին ըլլալու և կ'ուզէի աւելի մնալ, բայց որ խօսք տուած էի երկուշաբթի գործի ըլլալ: Կարծեմ լաւ անցաւ Մոնթրէալի ձեռնարկը<sup>130</sup>: Առաջին օրը՝ ուրբաթ, քիչ մը յոգնած կը զգայի, իսկ շաբաթ օրն արդէն անցած էր այդ յոգնութիւնը: Ճիշդ 5 վայրկեան առաջ Washingtonէն<sup>131</sup> ստացայ յոբելեանական յանձնախումբի կողմէն Վարդուի

126 Խոսքը Ստեփան Վարդանյանի հողվածի մասին է, որ յույս է տեսել «Սովետական գրականություն» ամսագրի 1966 թ. 4-րդ համարում: 1966 թ. օգոստոսի 4-ի նամակում Հակոբ Խաշմանյանը գրում է Համաստեղին. «Խօսք մըն ալ Վարդանեանի գրութեան մասին: Տղաքն ալ կը կարծեն, թէ դուն զուր այդքան յուրջի կ'առնես այդ ընդհանրապէս անբարեացական գրութիւնը, ուր մեծկակ բաժին մըն ալ ինքնացուցադրութեան ... մտահոգութիւն ցոյց կու տայ՝ «մարդիկ դատել-գնահատելու» գործը խորականութեան մը հետ: Համաստեղ, լաւ հասկցիր, դուն վերջին անձն ես, որ նման գրութեան մը պատասխանելու մասին պիտի մտածես: Հոգ մի ըներ նաև, երբ բարեկամ թերթեր կ'արտատպեն կամ կը պատասխանեն»:

127 «Յուսաբեր», 1966, հունիսի 13:

128 Ստ. Վարդանյանը գրում է, որ Համաստեղի տանն իրեն հյուրասիրել են թուրքական օդի, որից իր փորը ցավել է մի քանի օր: Լորիկ Համաստեղը շատ լավ հիշում է խորհրդային «գրոսաշրջիկներին» իրենց տանը հյուրընկալելու մանրամասները և պատմում է, որ իրենց տանը երբեք թուրքական որևէ ապրանք չի եղել: Խոսքը հավանաբար անխտնով օդու մասին է, որը շատ տարածված է արաբական Արևելքում, Հունաստանում և Թուրքիայում:

129 Տպագրվում է ըստ բնագրի, ԳԱԹ, ՀԽՖ, N 421: «Գրական թերթի»՝ 1995 թ. հունիսի 9-ի և «Նորք» հանդեսի՝ 1998 թ. 1-ին համարներում Գրիգոր Զանիկյանը ներկայացրել է Համաստեղի և Հակոբ Կարապետի (1925-1994) նամակագրությունը: 1966 թ. նոյեմբերի 17-ի նամակի մասին նա գրել է, որ դա «Ամենայն հավանականությամբ Համաստեղի վերջին նամակն է»: Պարզվում է՝ Համաստեղն այդ օրը գրել է նաև Հակոբ Խաշմանյանին և «Բազմավէպ»-ի խմբագրությանը հասցեագրված 2 նամակներ. «Բազմավէպ»-ի 1966 թ. 11-12-րդ համարը նվիրված է Համաստեղի հիշատակին, և «Վերջին նամակ» վերտառությամբ ներկայացված է գրողի նամակը՝ թվագրված՝ 17 նոյեմբեր, 1966 թ.:

130 Համաստեղի հորեղյանը Մոնթրէալում նշվել է 1966 թ. նոյեմբերի 11-ին: Հորեղյանին մասնակցել է նաև Արամ Հայկազը:

131 ԱՄՆ մայրաքաղաք Վաշինգտոն:

Նալպանդեանին ստորագրությունով նամակ մը և ներփակ 500 տուլարի չէք մը և որպէս Յ. Գ.՝ աւելցուցած էր, որ գումար մ'ալ Նիւ Եորք դրկուած է՝ կազմակերպական ծախքերու համար: Եւ կը կարծէր, որ բոլոր գումարները ձեզի պիտի դրկուէին: Ուրեմն իմ քով կայ 500 տուլարի չէքը: Չգիտէին՝ ինչ պէտք էր ընել: Նախընտրեցի քու կարգադրութեան ձգել: Ուրեմն ներփակ կը դրկեն քեզ 500 տուլարը՝ ստորագրուած: Յանձնախումբի ծախսերուն համար:

Մի քանի տող ալ կ'ուզեմ գրել Washingtonի յանձնախումբին, որ այդ դրամը յանձնուած է Կեդրոնական յանձնախումբին: Քալիֆոռնիա երթալու մտահոգութեան մէջ եմ: Կռանեանը հեռախօսեց հինգշաբթի, որ «Planeի<sup>132</sup> ծախսը կը ստանաս վաղը՝ ուրբաթ»: Այսօր երկուշաբթի է, և տակաւին ստացած չեմ: Չգիտեմ՝ արդեօք կորսուած է: Այսօր կ'ուզեմ հեռախօսիլ Կրթականին<sup>133</sup> officeը<sup>134</sup>: Մոնթրէալէն մեկնեցայ, իմ ճանապարհածախսը վճարելու խօսք չեղաւ և ոչ ալ hotelի<sup>135</sup> ծախսը վճարուեցաւ: Կ'երևի՝ կը դրկեն ճամբու ծախսս: Այս շաբթու ուրբաթ օրը պիտի մեկնիմ Քալիֆոռնիա: Կը յուսամ՝ բարով-խէրով կը վերադառնամ:

Շատ բարևներ Արուսեակին, Արփիին և Արամին:

Սիրով՝ Համաստեղ<sup>136</sup>:

132 Օդանավ (անգլ.):

133 Նկատի ունի Հայ կրթական հիմնարկությունը:

134 Գրասենյակ (անգլ.):

135 Հյուրանոց (անգլ.):

136 «Յուսաբեր»ի 1966 թ. դեկտեմբերի 14-ի և 23-ի համարներում տպագրված է Բյուզանդ Կռանյանի՝ «Համաստեղի վերջին ժամերը» հոդվածը, որից մի հատված հրատարակված է «Յուշամատեն»ի 74-րդ էջում՝ «Համաստեղի վերջին պահը» խորագրով. «... Սկսաւ կարդալ հայոց մշակոյթի մասին իր գրաւոր հոյակապ ծառը: Բառերը երբեմն արագօրէն կ'արտասանէր, և առոգանութիւնը կը դառնար քիչ մը շփոթ, բայց ատիկա բնականոն յուզման վերագրեցինք. բան մը, որ նման պարագաներու կը պատահի ամէն խօսողի: Բոլորս լարուած կ'ունկնդրէինք: Էջերը կարդալէ ետք՝ հանդարտօրէն կը վերցնէր ու կը դնէր տրցակի տակը: Հազիւ 5-6 վայրկեան խօսած էր. մէկէն ընդհատուեցաւ ձայնը, գլուխը ծռեց վար՝ կարծես աւելի լաւ տեսնելու, և յանկարծ աջ կողմի վրայ կքեցաւ և ինկաւ գրկին մէջ իր սիրելի Ալէքին\*, որ նստած էր իր աջին: Հասած էր իր ծառին 7րդ էջին: Այդ էջը անկարելի եղաւ գտնել, Զարգունը փրկած էր մնացեալը: Այդ ծառը Համաստեղի ոգեկան ժառանգութիւնն է և կտակը... Իր վախճանը ողբերգական էր թէև, բայց, միաժամանակ, վեհ ու գեղեցիկ, Ինք, որ աւելի քան կէս դար ծառայած էր հայ գրականութեան և մշակոյթին, այդ մշակոյթի պանծացման պահուն, Մեսրոպի աստուածաշունչ տառերը բերնին՝ հասաւ իր վախճանը: Ինկաւ երջանիկ՝ շրջապատուած սիրով ու գովքով, իր փառքի կատարին...»: «Հայրենիք» հանդեսի 1969 թ. 8-րդ համարում տպագրված է Համաստեղի վերջին խոսքը Լուս Անջելեսի հանդիսության ժամանակ (տես «Համաստեղ. Մոռացված էջեր», Բ հատոր, էջ 192-199):

\* Համաստեղի հորեղբայրական հանձնախմբի անդամ, նշանավոր բարերար Ալեք Փիլիպոսյան (1888-1966): «Հայրենիք» օրաթերթի 1966 թ. դեկտեմբերի 12-ի համարում կարդում ենք. «Ալեք Փիլիպոս, իր մտերիմ ընկեր Հէրի Քարեանի և Տրդատ Գազանձեանի հետ հիմը կը դնեն տպարանի մը (Լ. Անձէլըս), ուր կը հրատարակեն Ռուբէնի (Տէր Միսասեան) «Յեղափոխականի մը յուշերը» 7 հատոր, ապա Համաստեղի «Մայիտակ Ձիաւորը» 2 հատոր: Ալեք, Արփաքսաղ Մեդրակեան և Հէրի Քարեան կ'այցելեն Եւրոպա և Միջին Արևելք ու վերադարձին հիմք կը դնեն «Հայ կրթական հիմնարկութեան», որ տարիներ շարունակ կը նպաստէ Միջին Արևելքի հայկական դպրոցներուն անխտիր»: